

II

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ  
ԱՅՍՊԵՍ ԿՈՉԱԿԸ «ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ» ԹԱԳԻ ԱԱԿԻՆ

ՀՐԱՋ ԲԱՐԹԻԿՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 2001 թ. № 1-ում (էջ 168–180) լույս է տեսել Ռաֆայել Մաթևոսյանի «Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) բյուզանդական թագը» խորագրով հոդվածը: Ինչպես պարզվում է, հոդվածագրի գիտական նախասիրությունները շատ ընդարձակ են՝ ոչ միայն քաղաքական պատմություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, պետական ու վարչական կարգ, ֆեոդալական տոհմերի ծաղուճաբանություն, ապա նաև հերալդիկա, կայսերական ու թագավորական *insignia* - նշանակներ և նմանները: Վերջին երկուսը, որ բովանդակությունը արձագանքում են միմյանց, կարոտ են ուսումնասիրողի հատուկ մասնագիտական<sup>1</sup> պատրաստության, այլապես թյուրիմացություններն ու հեղինակի համար դժվարին դրություն ստեղծումն անխուսափելի են: Նախքան բյուզանդական թագին վերաբերող հոդվածին հանգամանորեն անդրադառնալը, ավելորդ է համառոտակի կանգ առնել հեղինակի «Հայկական զինանշաններ»<sup>2</sup> գրքույկի վրա: Մի ընդհանուր դիտողություն: Առանձին պատկերաքանդակներ, որոնք պարզապես դեկորատիվ նշանակություն ունեն, հեղինակը համարում է «զինանշաններ», մի բան, որ առանձին դժվարություններ է առաջացնում: Գրքույկի հեղինակն ընդունել է «զինանշանի» տարածքային սկզբունքը, այս կամ այն «զինանշանը» վերադրել է ֆեոդալական այն ընտանիքին, որի հողերի վրա է այն հանգիպում: Բայց քանի որ դեկորատիվ նշանակություն ունեցող այս կամ այն պատկերաքանդակը (ըստ Մաթևոսյանի՝ զինանշանը) հանդիպում է տարբեր ֆեոդալական ընտանիքներին պատկանող տարածքում, նույն «զինանշանը» դառնում է մեկից ավելի ընտանիքների «զինանշան»: Ինչպես կտեսնենք ստորև, կան ֆեոդալական ընտանիքներ, որոնք ունեն երեք «զինանշան»:

Ձինանշանների դասակարգումը կատարվում է ըստ ֆեոդալական ընտանիքների՝ Բագրատունիներ, Կյուրիկյաններ, Զաքարյաններ, Մամիկոնյաններ, արանքում նաև՝ Խաղբակյաններ, Վաչուտյաններ, Ազիզբեկյաններ: Ուր կենդանի ճանկած արծիվ է պատկերված՝ ապա այդ Մամիկոնյանների զինանշանն է (նկ. 47, 48, 49, 50): Այդպիսիք են համարվում անգամ Զվարթնոց տաճարի չորս մույթերի խոյակների արծիվների քանդակները: Բոլոր «զինանշան» համարված կենդանի ճանկած արծիվների

1 Հոդվածի բոլոր ընդգծումները մերն են – Հ. Բ.  
2 Ռ. Մ ա թ է ո ս յ ա ն. Հայկական զինանշաններ. Երևան, 1994:

թանդակները հանդիպում են շինությունների դրսի պատերին, այստեղ ունենք տաճարի ներսում, որտեղ արծիվը ոչինչ ճանկած չունի: Դրան հեղինակի տված բացատրությունը հետևյալն է. «Պարզապես տեղ չի մնացել(!) երկրորդ բաղադրամասի համար», այսինքն ճանկված կենդանու համար կամ «գինանշանի տարրերակ է» (առանց ճանկվող կենդանու, էջ 55): Հեղինակը ոչ մի բացատրություն չի տալիս, թե ինչ գործ ունի Մամիկոնյանների գինանշանը հենց Զվարթնոցում, ինչպես «կասկած լինել չի կարող, որ արծիվը պատկերում է Ներսեսի (Ներսես III Տայեցու – Հ. Բ.) գինանշանը», վերջապես ինչի՞ հիման վրա է Ներսես III կաթողիկոսը Մամիկոնյան դարձել: Հեղինակը հղում է Սեբեոսի «Պատմության» 166-րդ էջին, ուր գրված է. «Արդ ասացից փոքր մի ի շատ է վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի, զի էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում Իշխան կոչէն»: Եվ ուրիշ ոչինչ: Եթե Տայքը Մամիկոնյանների տիրույթն էր, ապա դա նշանակում է, որ նահանգի ողջ բնակչությունը՝ իշխանից մինչև իշպանը, պատկանում էին Մամիկոնյանների տոհմին: Սա ի՞նչ տրամաբանություն է: Հայերս ունեցել ենք 131 կաթողիկոս, այժմ ընարել ենք 132-րդին: Ինչպե՞ս սլատահեց, որ նրանցից 131-ը «գինանշան» չունեն, ունի միայն Ներսես III-ը: Եվ այդպես մեկ սխալը ձնագնդի պես աճելով, իր հետևից բերել է ևս երեքը. 1) արծիվը՝ Ներսես III-ի գինանշան, 2) գինանշանի պատկանելությունը՝ Մամիկոնյաններին, և 3) Ներսես III-ը՝ Մամիկոնյան:

Արծիվի պատկերաբանգակը հանդիպում է և ինդրակայանների իշխանության տարածքում, նրանց կառուցած շինության վրա, ուրեմն դա էլ ինդրակայանների գինանշանն է (նկ. 52ա, 53, 54, 56, 57): Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը գրում է, որ ինդրակայանների «իշխանական տոհմի ծագման մասին մեր տեղեկությունները շատ չնչին են: Նոքա միայն անցողակի կերպով հիշում են, թե ինչն էին, առանց մանրամասնություններ տալու նրանց նախահայրերի մասին»: Ըստ Բ. Ուլուբաբյանի, նրանք սերում են Արցախի Առանշահիկ նախարարական տոհմից<sup>3</sup>: Բայց քանի որ արծիվի պատկերաբանգակը, ըստ Մամիկոնյանի, պատկանում է Մամիկոնյաններին, ապա նա հարցը լուծում է շատ հեշտ, ինդրակայաններին հայտարարում Մամիկոնյաններ<sup>4</sup>:

3 Գ ա Ր Ե Գ Ի Ն կ ա թ ո ղ ի կ ո ս Հ ո վ ս Ե փ յ ա ն. ինդրակայանք կամ Պոռչանք Հայոց պատմության մեջ. Բ հրատարակություն. Անթիլիաս, 1969, էջ 14:

4 Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ). ինդրակայանք, հ. 4, էջ 714:

5 Ֆեոդալական ընտանիքների անունների ծագումնաբանությունը Մամիկոնյանի տված բացատրություն-մեկնաբանությունները շատ զավեշտական են: Օգտվելով առիթից, նշենք նրա նկատառումները ինդրակայան անվան վերաբերյալ, որը նա կապում է «նրանց» «գինանշան» արծիվի հետ: «Համոզված ենք, – գրում է նա, – որ Մամիկոնյանների երկրորդ (ինդրակայան – Հայրաստան) անվանումը ծագումնաբանական կապ ունի գինանշանի գլխավոր բաղադրամասի (այսինքն՝ արծիվ – Հ. Բ.) հետ: Երկուսի հիմքը՝ «ինդր-Հայր» բառն է: Հայր նշանակում է լար, թակարդ, խեղք, իսկ «խաղբնակ» կացարների ցեղին պատկանող թռչուն (կարմաստունը), փոքր մարմնով և շատ երկայն ու բարակ կարմիր ոտներով: Մյուս տեսակի՝ կովող խաղբնակի արուն ունի փետուրների մանյակ, որը ցցում է անհրաժեշտության դեպքում: Մանյակը բացած թռչունը աստիճանաբար վերածվել է արծիվի (!): (Այստեղից արծիվ պատկերող «գինանշանը» – Հ. Բ.): Իր հերթին խաղբնակ (կամ խաղբնակ) բառը և նրանից առաջացած անունները (ազգանուն, ինչպես տեղանուն և այլն), մեր կարծիքով ունեն ընդհանուր արմատ, որը էթնիկական ծագում ունի» («Հայկական գինանշաններ» գիրքը, էջ 66): Ահա այսքան: Եվ այդ «փոքր մարմնով և շատ երկայն ու բա-

Եթե արծիվը պատկերված է Օրբելյան ֆեոդալական իշխանության տարածքում գտնվող շինություն պատերին, ապա դա համարվում է Օրբելյանների գինանշան (նկ. 60, 61: Հմմտ. օրինակի համար նկ. 56-ը նկ. 61-ի հետ): Վերջապես հենց նույն այդ «գառ ճանկած» արծվի պատկերաքաղաղը հանդիպում է Սյունիքի Ամաղուի նորավանքի (XIII–XIV դդ.) և Ատրպատականի XVII դ. սբ. Ստեփանոս նշանավոր վանքի պատերին<sup>6</sup>: Ուրեմն Սյունիքը XIII–XIV դդ. և Ատրպատականը XVII դ. Մամիկոնյանների տիրություն էին:

Ամենից տարօրինակը Օգոստոս Օկտավիանոս կայսեր մ.թ.ա. 20–18 թթ. Հայաստանի դեմ տարած հաղթանակի և երկրի նվաճման առթիվ կարած շքադրամի (Մաթևոսյանն այն դրամ է անվանում) վրայի պատկերի Մաթևոսյանի նկարագրությունն ու բացատրությունն է: Ըստ նրա, այնտեղ պատկերված է «գառ ճանկած արծիվ»: «Տրամաբանական է եզրակացնել, – դրում է Մաթևոսյանը, – որ հռոմեական դրամի վրա պատկերված է նվաճված երկրի խորհրդանիշը (!), նրա պետական սիմվոլիկան, այսինքն Արտաշիսյանների գինանշանը» (էջ 79, ծանոթ. 1): Այսինքն ուզում է ասել, թե կենդանի ճանկող արծիվը Արտաշիսյանների գինանշանն է: Մաթևոսյանն այդ շքադրամի նկարը վերցրել է Խ. Ա. Մուշեղյանի հոդվածից<sup>7</sup>, բայց նեղություն չի քաշել դոնե կարգալ հիշյալ շքադրամին աված նկարագրությունը: Գուցե և կարգացել է, բայց նա սովորություն ունի մի բան կարգալ, այլ բան գրել (տե՛ս, օրինակ հունգար թագավորների «ստացած» բյուզանդական թագերի առնչությունը գրածը): Պարզվում է, «արծիվը» ամենևին էլ արծիվ չէ, այլ Հաղթանակի (հունարեն՝ Νικη, լատիներեն՝ Victoria) թևավոր դիցուհին, որը եղջյուրներից բռնել է ավելի խոշոր կենդանի (ցուլ) և դետին տապալել: Մի խոսքով՝ Հռոմը հաղթել է Հայաստանին: Չէ՞ որ շքադրամի վրայի մակագրությունը «Armenia capta» է՝ «Հայաստանը նվաճված»: Ահա և Արտաշիսյանների «գինանշանը», նրա խորհրդանիշը, սիմվոլիկան: Եվ ոչ մի բացատրություն, ինչպե՞ս Արտաշիսյանների արքայական «գինանշանը» բազում դարեր անց դարձավ Մամիկոնյանների, Խաղբակյանների և այլ ֆեոդալական ընտանիքների «գինանշանը»:

Հռոմի՝ Հայաստանի դեմ տարած մի այլ հաղթանակի առթիվ 163–164 թթ. Մարկոս Անտոնինոսի կտրած մի այլ շքադրամի վրա նույն «Armenia capta» մակագրությամբ պատկերված է Հայաստանը ծնկի բերված կնոջ տեսքով<sup>8</sup>: Եթե հետևենք Մաթևոսյանի տրամաբանության, ապա պիտի ընդունենք, որ գա էլ Հայաստանի «գինանշանն» է...

Աշխատության մեջ բերված են բազմաթիվ պատկերաքանդակներ ու ձեռագրերի մանրանկարներ, որոնց առնչությունը գինանշանի հետ չի էլ

րակ կարմիր ոտներով» թռչնակը ի վիճակի է ճանկել ու բարձրացնել (ուտելու համար) մի ամբողջ «գառ»: Չէ՞ որ մեր (հայ) թռչուններն էլ ուրիշ են ...

6 Documenti di Architettura Armena - Amagu Noravank 14, նկ. 11: Documenti di Architettura Armena S. Stephanos, 10, նկ. 25:

7 Խ. Ա. Մուշեղյան. Հին Հայաստանի դրամական շրջանառության պատմությունից (մ.թ.ա. V դ. վերջերից մինչև մ.թ. III դ. սկիզբը). – «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1970, № 3, էջ 81: Նույն իրարամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.). Երևան, 1985, էջ 93–94:

8 Խ. Ա. Մուշեղյան. նշվ. հոդվ., էջ 90: Նույն ի նշվ. աշխ., էջ 101:

նշմարվում (Դանիելը առյուծների գբում - նկ. 2, 3), գինու (կամ հացահատիկի) կարասի վրայի զարդագոտին (նկ. 5, 6), ապա և «մանրանկարներ «խաչ» հորինվածքով» (նկ. 23-24, 25-26): Վերջապես սովորական խաչքարեր, որոնց վրա ոչ մի գինանշանի հետք անդամ չկա (նկ. 27, 27ա) և այլն:

Այդուհանդերձ մի խաչքարի վրայի պատկերաքանդակին Մաթևոսյանի տված մեկնաբանությունն ստիպված ենք մանրամասն անգրագառնալ, որպեսզի ընթերցողին պարզ դառնա, թե ինչի կարող է հանգեցնել նյութին անտեղյակ լինելը և հիպերտրոֆիկ երևակայությունը: Խոսքը վերաբերում է Լոռվա բերդի խաչքարին (նկ. 31ա): Մաթևոսյանը գրում է. «Այս խաչքարը հերալդիկ նշանների անսովոր հորինվածք ունի. սալի ամենաներքևում քանդակված է երեք նշան՝ ցլի (իրականում՝ եզան - Հ. Բ.), արծվի և կատվաբնուանիքի կենդանու (իրականում՝ առյուծի - Հ. Բ.) գլուխներ: Դրանց վրա մարդու գլուխ է հենվում: Այս քանդակախումբը պատվանդան է հանդիսանում խաչի համար, որն անմիջականորեն հենվում է մարդագլխի վրա»:

«Նկարագրված հորինվածքը, - շարունակում է Մաթևոսյանը, - եզակի է(!) հայկական հերալդիկ քանդակներում և բացառիկ արժեք ունի: Խաչքարի ամբողջական հորինվածքը... ավանդական կառուցվածք ունի. եթե սովորաբար խաչքարերում խաչն աճում է վարդյակից<sup>9</sup>, ապա այստեղ այն աճում է մարդագլխից: Ամբողջ հորինվածքում ընդգծված է մարդու կարևորությունը՝ նա իշխում է կենդանիների վրա և միաժամանակ հենարան է խաչի համար: Կենդանիների քանդակներն, անշուշտ (!), իշխանական տների զինանշաններ են, իսկ այն անձը, որի գլուխը քանդակված է նրանց վրա՝ այդ տների գերադասը (սյուզերենը): Միաժամանակ գլխի վրա հենված խաչը ընդգծում է, որ գերադասը խաչի հավատի, եկեղեցու պատվար է հանդիսանում: Գլխաքանդակն, անկասկած(!), ներկայացնում է Զաքարյան տան ավազ ներկայացուցիչներից մեկին, թե ում առայժմ չենք կարող ասել (հույս ունի ապագայում ասել - Հ. Բ.), բայց քանի որ խաչքարը դանվում է Լոռի ընդունում, որը պատկանում է Զաքարե ամիրսպասալարի տանը, կարելի է ենթադրել, որ քանդակը պատկերում է կամ Զաքարին, կամ նրա հաջորդին»:

Մաթևոսյանի եզրակացությունը. «Դատելով խաչքարի քանդակներից, գերադասի վասալ իշխանություններից են Կյուրիկյանները (զինանշանը՝ կատվաբնուանիքի կենդանի<sup>10</sup>), մյուսների մասին կարելի է ենթադրություն անել. արծիվը հավանաբար (!) Դսեղի Մամիկոնյանների նշանն է: Ցլի գլուխը ոճական նմանություն ունի Սանահնի գավթի (նկ. 28), Սանահնի Աստվածածնի եկեղեցու ցլաքանդակների և Գեղարդում ինդրակ-

9 Դա վարդյակ չէ, այլ արեգակի ստիլիզացված սկավառակը և նախասկզբնական նշանակությունն էր՝ խաչի (քրիստոնեության) հաղթանակը ընդդեմ հեթանոսության (արևապաշտության): Ժամանակին ինձ բացատրել էր Լ. Ա. Դուռնովոն: Ռուսական խաչի ներքևում մահիկն է պատկերված խաչի հաղթանակը ընդդեմ իսլամի:

10 Սովորական առյուծ է: Բայց առյուծի քանդակով զինանշանը Բագրատունիներին էր (նկ. 13, 14, 15, 16, 17, 18, 19, 19ա, 20): Ստացվում է, որ միաժամանակ Կյուրիկյաններին էլ է (նկ. 28, 29, 29ա, 30):

յանների զինանշանների ցլի քանդակների հետ<sup>11</sup>: Սա շատ ուշագրավ փաստ է և կարոտ հատուկ քննութայն: Լոռվա բերդի խաչքարի քանդակները ոչ միայն արժեքավոր են հայկական հերալդիկայի համար, այլև պատմաաղբյուրադիտական կարևոր արժեք ունեն: Ճիշտ պարզաբանումը կօգնի XII–XIII դդ. սահմանագլխին Լոռիում գոյացած քաղաքական իրավիճակի ավելի հստակ լուսաբանմանը<sup>12</sup>:

Սույն խաչքարի վրա ոչ մի զինանշան էլ չկա, քանդակների և ամբողջ հորինվածքի ճիշտ պարզաբանումն ամենևին էլ չի օգնում ընդհանրապես որևէ քաղաքական իրավիճակի լուսարանմանը: Նման «եզակի» հորինվածքի կարելի է հանդիպել ոչ միայն քանդակի ձևով՝ բազում խաչքարերի վրա, այլև հարյուրավոր–հազարավոր՝ ողջ քրիստոնեական աշխարհի ձեռագրերի մանրանկարներում: Մաթևոսյանի կողմից «մարդագլուխ» հորջորջվածը, որ հավանաբար Զաքարե Զաքարյանի կամ նրա հաջորդի գանգն է, ընդգծում է նրա «խաչի հավատի, եկեղեցու պատվար հանդիսանալը», կամ արծվի գլուխը, որ իբրև Դսեղի Մամիկոնյանների զինանշանն է, ցլի գլուխը, որ իբրև թե դարձյալ ինքնակյանների մի այլ զինանշանն է, և, վերջապես, «կատվաբնտանիքի կենդանու» գլուխը, որ իբրև Կյուրիկյանների զինանշանն է, պարզապես չորս ավետարանիչների սիմվոլներն են: Մատթեոսի սիմվոլը մարդն է (ըստ Մաթևոսյանի՝ «մարդագլուխ»), Մարկոսինը՝ առյուծը, Լուկասինը՝ եզը, վերջապես Հովհաննեսինը՝ արծիվը<sup>13</sup>: «Հորինվածքի» աղբյուրը եղեկիել մարգարեի «Տեսիլքն» է (Ա.10). «Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ և կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց, և կերպարանք եզան և կերպարանք արծուոյ ի ձախմէ չորեցունց»:

Նշենք մի քանի «հորինվածքներ» խաչքարերի վրա, որպեսզի Մաթևոսյանը համոզվի, որ Լոռվա խաչքարի «հորինվածքը» եզակի չէ: Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը ցույց է տալիս, որ Քելիչքենդ (այժմ՝ Եղեգնաձոր) գյուղի հարավարևելյան կողմում գտնվող մի եկեղեցու կից գերեզմանատանը մի խաչքար կա, որի «ճակատի մեջտեղը քանդակված է մի Ամենակալ, նստած չորեքկերպյան աթոռի վրա: Տիրոջ հագուստի ծալքերը, նստվածքը, չորեքկերպյանները (աջից՝ արծիվ և առյուծ, ձախից հրեշտակ և եզ, ամենքն էլ թևավոր)»<sup>14</sup>: Խաչքարը գտնվում է Տարսայիճ Օրբելյանի տիրույթների տարածքում: Հետևելով Մաթևոսյանի «տրամաբանութայն» նրան ենթակա ֆեոդալների «զինանշաններն» են ներկայացնում, իսկ «մարդագլուխը», հավանաբար, Տարսայիճ Օրբելյանի գլուխն է ...

Նման «հորինվածքներ» կան Սևանի վանքի խաչքարերի վրա՝ չորս սիմվոլներով<sup>15</sup>, ինչպես և Ցախաց քարի խաչքարերի վրա (արծիվ՝ ճանկած

11 Բայց, ըստ Մաթևոսյանի, ինքնակյանների զինանշանը արծիվն էր (տե՛ս իր գրքուկի նկ. 52, 52ա, 53, 54 և թևավոր ու ոչ թևավոր առյուծները (նույն տեղում, նկ. 58, 58ա): Ստացվում է, որ ինքնակյանները մի երրորդ զինանշան էլ ունեին՝ ցլի պակերմամբ: Էլ բան մնաց: Սա հստակ փաստ չէ<sup>9</sup>, որ խոսքը զինանշանի մասին չէ, այլ դեկորատիվ քանդակի:

12 Ի. Մ. ա. թ. և. ո. ս. յ. ա. ն. Հայկական զինանշաններ, էջ 43–44:

13 The Oxford Dictionary of Byzantium. Ed. Alexander P. Kazhdan, vol. 2, New York - Oxford, 1991, p. 762.

14 Գ. ար. ե. գ. ի. ն. կ. ա. թ. ո. ղ. ի. կ. ո. ս. Հ. ո. վ. ս. ե. փ. յ. ա. ն. նշվ. աշխ., էջ 14:

15 Documenti di Architettura Armena 18, Sevan, նկ. 15, 16:

գառով, նկ. 23), Մատթեոս ավետարանիչի սիմվոլով (նկ. 46), արծվի ու եղան (նկ. 86), չորս սիմվոլները միասին (Հին Ջուղայի 1602 թ. խաչքարի վրա, նկ. 196-197)<sup>16</sup>:

Անցնենք ձեռագրերի մանրանկարներին: Նախ Վասպուրականում գրված ու ծաղկված («Հայկական մանրանկարչություն: Վասպուրական»)՝ Չորս սիմվոլները միասին մեկ մանրանկարում չորս անգամ (նկ. 73): «Վասպուրականի մանրանկարչություն»<sup>18</sup>, նկ. 10, 38 (բացատրագրով՝ «մարգ, առևձ, արծիւ, եզն»), նկ. 52 (նույն բացատրագրով): Եթե Հետեենք Մաթևոսյանի տրամաբանությունը, պիտի ընդունենք, որ Վասպուրականի մանրանկարներում պատկերված պիտի լինի Գագիկ Արծրունին (նրա մարդագլուխը) կամ Սենեքերիմ Արծրունին (և նրա համապատասխան մարգագլուխը), իսկ մնացածները, հավանաբար, Վասպուրականում էլ գոյություն ունեցող Դսեղի Մամիկոնյաններից են և Կյուրիկյաններից...

Մաթևոսյանին քաջածանոթ է Աստղիկ Գևորգյանի մի ուսումնասիրությունը, բայց գրանում նա չի նկատել իր կողմից «եզակի» համարված «Հորինվածք» (ավետարանիչների չորս սիմվոլները, նկ. 45)<sup>19</sup>: Սիրարպի Տեր Ներսեսյանի Կիրիկյան ձեռագրերի մանրանկարներին նվիրված գրքում կարելի է այդ սիմվոլներին հանդիպել ավելի քան 25 անգամ<sup>20</sup>, որում «մարդագլուխը», երևի, Ռուբինյաններից կամ Հիթունյաններից մեկն ու մեկինն է ...

1300–1307 թթ. Գլաձորում (Վայոց ձոր) գրված և ծաղկված Ավետարանում այդ «անսովոր հորինվածքները» (չորս ավետարանիչների սիմվոլները) բազմիցս են հանդիպում<sup>21</sup>: Հետեելով Մաթևոսյանի տրամաբանությանը, այնտեղ պետք է որ պատկերված լինի Գլաձորի համալսարանի ռեկտոր Եսայի Նչևցու համապատասխան «մարդագլուխը»...

16 Հայկական խաչքարեր: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1973:

17 Հայկական մանրանկարչություն. Վասպուրական, կազմեց, առաջաբանը և ծանոթ. Հ. Հակոբյան. Երևան, 1978:

18 Վասպուրականի մանրանկարչություն, կազմեց Հ. Հակոբյան. Հ. 2. Երևան, 1982:

19 Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, կազմեց, առաջաբանը և ծանոթ. Աստղիկ Գևորգյան. Երևան, 1982, նկ. 45: Տե՛ս նաև. Сокровища книжного искусства в собраниях СССР. Матенадаран, т. I (նկ. 126, 176, 184): Նաև՝ Treasures in Heaven. Armenian Illuminated Manuscripts. Ed. Thomas F. Mathews and Roger S. Wieck, New York, 1994, նկ. 126, 176, 184: Հիշենք նաև գրավոր աղբյուրներից մեկը. Մաքենացվոց Սողոմոն վանահայրը իր պատասխանում «Սողոմոն ոմն միանձնեայ, որ յետոյ Հայոց եղև կաթողիկոս», դիմելով քաղկեդոնիկ հույներին, ի մի՞թի այլոց հարց էր տալիս. «Ո՞վ է պատրիարզն ձեր. զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն. Անտիոքայն՝ Մասթէոսին, Հռոմայն՝ Դուկասուն, Եփեսոսին՝ Եսայա՝ Յովհաննուն... ըստ չորքեկերպեան կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն...» (Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ու լ ա - գ ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 272):

20 Sirarpié Der Nersessian. Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia. Vol. II, Washington, 1993, նկ. 10, 11, 12, 13, 27, 32, 67, 68, 70, 106, 107, 108, 129, 130, 138, 139, 140, 141, 150, 154, 155, 321, 334, 556:

21 F. Thomas Mathews and Avedis K. Sanjian. Armenian Gospel Iconography. The Tradition of the Glajor Gospel. Washington, D. C. (Dumbarton Oaks Studies; 29), 1990, p. 62, 65, 179, 180-182. Տե՛ս հատկապես Մարկոսի ավետարանի առաջին թերթը, ուր. վերևից ներքև ներկայացված են չորս ավետարանիչների սիմվոլները:

Հայկական բազում այլ ձեռագրերում նման բովանդակությամբ մանրանկարները շատ շատ են և կարիք չկա մեկառմեկ թվարկել: Այդպիսիք կան և քրիստոնյա մյուս բոլոր ժողովուրդների Աստվածաշունչ գրքերում:

Զինանշանների հարցը «լուծելուց» հետո ահա, Մաթևոսյանն անցել է առաջին երեք Բագրատունի թագավորների թագին, ապացուցելու համար, որ դրանք բյուզանդական են, բյուզանդական արքունիքի կողմից շնորհված: Նա այդ մասին գրել էր դեռ «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը» գրքում (Երևան, 1990, էջ 97-99), որին մենք անդրադարձել էինք և ապացուցել նման կարծիքի հիմնադուրկ ու թյուրիմացուկություն լինելը<sup>22</sup>: Թվում է, թե հարցը փակվել էր, բայց պարզվում է, որ ոչ: Ռ. Մաթևոսյանը «Պատմա-բանասիրական հանդեսում» հրատարակած հոդվածում շարունակում է պնդել իր կարծիքը, այս անգամ բերելով «փաստական ապացույցներ» և բյուզանդական թագ «ստացած» երեք Բագրատունի թագավորների վրա բարդելով բյուզանդական մի թագ էլ «ստացողի»: «Բյուզանդիան թագ էր շնորհել նաև Փառիսոսի իշխան Հովհաննես-Սենեքերիմին» (էջ 178): Հ. Բարթիկյանը, հենվելով բյուզանդական կայսերական իդեալի, աղբյուրների հաղորդած (և չհաղորդած) փաստերի վրա, գտնում է, որ Բյուզանդիան ոչ թե հայոց, այլև ոչ մի օտար պետության գահակալին թագ չի ուղարկել, հետևաբար նրան βασιλευς - թագավոր չի ճանաչել: Եթե անգամ թագ էլ ուղարկել է (օրինակ՝ Լևոն II-ին), այն թագը ամենևին էլ բյուզանդական կայսրերի թագի նմանակը չէր, իսկ ստացողին էլ ընդամենը կոչել է rex - րոյ և ոչ βασιλευς - բասիլևս: Պահպանվել են բազմաթիվ կայսերական և պատրիարքական նամակներ՝ ուղղված Կիլիկիայի հայոց վեհապետներին, որոնցում հայոց արքան մշտապես րոյ - rex է կոչված: Իսկ rex-ը, ըստ XII դ. բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսի, երկրորդ «սորտի» թագավոր է՝ «δεύτερας ειλίχασι ταξεως»<sup>23</sup>:

Ռ. Մաթևոսյանը նախ և առաջ բնորոշում է Հ. Բարթիկյանի մասնագիտությունը: Ըստ նրա, նա «բյուզանդագետ» է, և Մաթևոսյանի շրթներում այդ բառը կարծես կշտամբանք է հնչում: Ինքը, բնական է, «զուտ» հայագետ է (հետևաբար՝ հայրենասեր): Բարթիկյանի ցայսօր հրատարակած 15 գրքերը, ավելի քան 150 հոդվածները և հանրապետական, համամիութենական ու միջազգային սիմպոզիումներում, կոնֆերանսներում ու կոնգրեսներում կարդացած 35 զեկուցումները զուտ հայագիտական են: Անգամ բյուզանդական աղբյուրների հայերեն թարգմանության իր հրատարակած հինգ հատորների ընդհանուր վերնադիրը «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» է: Բյուզանդագետ Բարթիկյանին «զուտ» հայագետ Մաթևոսյանից տարբերողն այն է, որ Բարթիկյանը Հայաստանը չի դիտում, ինչպես Մաթևոսյանը, որպես Ռորինզոն Կրուդոյի կղզի: Բարթիկյանը նկատի ունի, որ Հայաստանը գտնվում էր տարբեր ժողովուրդների ու պետությունների շրջապատում, և համոզված է, որ նրա պատմությունը

22 Հ. Բարթիկյան. Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 1:

23 Ioannis Cinnami Epitome rerum ab Ioanne et Alexio Comnenis gestarum. Rec. A. Meineke, Bonnae, 1836, p. 69.

չարադրելիս չի կարելի անտեսել նրանց պատմությունն ու աղբյուրները, չի կարելի բավարարվել սահմանափակ տվյալներով: Ռ. Մաթևոսյանի 2001 թ. գրած հոդվածը չի կարող գիտական լինել հեղինակի քառասուն տարի անընդհատ մի հինգ-տասը միջնադարյան հայ պատմիչների երկերի (որոնց զրաբար իմաստը միշտ չէ որ, ինչպես կտեսնենք, հասկանում է) յուրով տապակվելու գնով: Դա քաջ գիտակցում էին դեռ պատմահայր Խորենացին և հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանը: Մաթևոսյանն աշխատանք է գրել, որը վերաբերում է բյուզանդական թագերը հայոց արքաներին «չնորհվելուն», բայց նրա «փաստերը» բացարձակապես թաղերը «ստացողի» կողմինն են, ավելի ճիշտ՝ իր հորինածներն են, որ, բնական է, հիմնահարցը ոչ մի կերպ չեն լուծում: Կարծես թագ «ավողը» խաղից դուրս է գտնվում, նրա փաստերը կարելի է և անտեսել, կթև դրանք չեն նպաստում իր կանխակալ եզրակացությունների հաստատմանը:

Հոդվածը առաջին իսկ նախադասությունից տարակուսանք է առաջացնում: Անդրադառնալով բյուզանդական առաջին թագ «ստացող» Աշոտ I Բագրատունուն, Մաթևոսյանը գրում է, թե նա «862 թ. խալիֆայության կողմից ճանաչվել է արաբական «Արմինիա» փոխարքայության կառավարիչ, թեկուզ արաբ ոստիկանի վերահսկողությամբ»<sup>24</sup>:

Նախ, ինչ է նշանակում «փոխարքայության կառավարիչ»: «Փոխարքայության կառավարիչը» հենց փոխարքան է: 862-884 թթ. ընթացքում (Աշոտ I-ի Արմինիայի «փոխարքայության կառավարիչ» «նշանակվելուց» մինչև խալիֆայից թագ ստանալու ժամանակը) իշխած «Արմինիայի» փոխարքաները միանգամայն հայտնի են՝ տարիներով, անգամ ամիսներով: Նրանց թվում Աշոտ Բագրատունի գոյությունն չունի<sup>25</sup>: 862 թ. նա ստացավ ոչ թե Արմինիայի փոխարքայի պաշտոնը, այլ Հայաստանի «բատրիկ ալ բատարիկայի» (պատրիկների պատրիկ), որ հայերենում «իշխանաց իշխան» է: Դա պարզ ու հստակ ցույց է տալիս Հովհաննես Դրասխանակերտցին. «Ոստիկան ոմն ի Հայս առաքեալ՝ որ Ալի Արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին (իմա խալիֆայի – Ղ. Բ.) իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր»<sup>26</sup>: «Արմինիա» փոխարքայության մեջ, բացի Հայաստանից, մտնում էին նաև Վրաստանն ու Աղվանքը: Ըստ նույն Հովհաննես Դրասխանակերտցու, «ոստիկանն Պարսից, Հայոց և Վրաց և

24 Ռ. Մաթևոսյան. Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) բյուզանդական թագը. – ՊԲՀ, 2001, N 1, էջ 168: Հմմտ. ն ու յ ն ի Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը. Երևան, 1990, էջ 97, ուր նա գրում է. «862 թ. արաբ ոստիկանին փոխարինեց Բագրատունի իշխանաց իշխանը»: Այսինքն՝ փոխարքա դարձավ: Բայց 862-863 թթ. փոխարքա էր Ալի իբն Յահյա ալ-Արմանին: Մաթևոսյանը զրում է Արամ Տեր-Ղևոնդյանի (Армения и Арабский халифат. Ереван, 1977), գրքի 234-րդ էջին, ուր գրված է. «Аббасиды старались привлечь к себе ишхана Армении Ашота Багратуни и поспешили задобрить его титулом “батрик ал-батарика” (патрикий патрикиев. ишханац ишхан ) в 862 г. через известного полководца Али Ибн Йахиа ал-Армени».

25 А. Тер-Гевондян. Նշվ. աշխ., էջ 284-285:

26 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 133:



Աղուանից Յուսուփ»<sup>27</sup>: Տարօրինակ կլինեք, եթե խալիֆայությունը այդ կարևոր պաշտոնում քրիստոնյայի նշանակեք:

Այնուհետև: Աշոտ Բագրատունին, լինելով «փոխարքայության կառավարիչ», գտնվում էր «արաբ ոստիկանի» վերահսկողության տակ: Բայց «ոստիկանը» հենց փոխարքան է, փոխարքա այսօր ենք ասում, միջնադարյան աղբյուրներում նա հենց ոստիկան է կոչվում: Ստացվում է, Արմինիան միաժամանակ կառավարել են երկու փոխարքա, մեկը հայ, մյուսը արաբ, ընդ որում Աշոտը, լինելով փոխարքա, ենթարկվում էր փոխարքային (արաբ): Աշոտ Բագրատունին ո՞ր աղբյուրում է «ոստիկան» կոչված:

Հոգվածագիրը շարունակում է. «Աշոտ Բագրատունու թագավորությունը խալիֆայից անմիջապես հետո ճանաչեց Բյուզանդական կայսրությունը. կայսր Վասիլ I-ը նույնպես թագ ուղարկեց Աշոտին: Այդ մասին հաղորդում է XIII դ. պատմիչ Վարդան Արևելցին, քաղելով այդ փաստը, ինչպես կտեսնենք (!) նախորդ մատենագիրներից. «Զնոյն և կայսր Վասիլ առաքէ (թագ) և օրհնէ զթագն Տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն և վեց թուին» (էջ 168):

Վարդան Արևելցին գրում է «դեպքերից» չորս հարյուրամյակ անց, իսկ հայոց թագավորության վերականգնմանը ներկա և դրա անմիջական գործիչ նշանավոր պատմիչ, ապագա կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898-929 թթ) նման բան չի ասում: Եթե իրոք նման դեպք տեղի ունեցած լինեք, Աշոտ I-ին բյուզանդական կայսեր կողմից թագ ուղարկվելը, ինչպես Մաթևոսյանն է կարծում՝ թագի նմանակը (կոպիան), կաթողիկոսն ինչու՞ այդ դարակազմիկ դեպքը արձանագրած չպիտի լինեք<sup>28</sup>: Լռությունը ևս փաստ է՝ *argumentum ex silentio* - «լռության փաստ»: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է նաև Աշոտ I-ի հաջորդ Սմբատ I Բաղրատունու մասին, որին թեև անվանում է թագավոր և ընդգծում նրա կապը Լևոն VI կայսեր հետ, որ «նախ ըստ հայրենի կարգացն ուխտի ոչ գատէր զինքն ի սիրընթաց մտերմութենէ կայսերն Հռոմոց Լևոնի ... և Կայսր ոչ եթէ փոքր ինչ քան թէ մեծամեծս նմա ընձեռէր պարգևս և պատիւս գեղեցիկ զինուց և զարդուց և ոսկեհուռ հանդերձ զգեստուց, և ըմպակս և բաժակս, և կամարս ականակապս ի համակ ոսկեոյ. այլ և մեծ քան գայն այն էր, զի որդի սիրելի Կայսր զՍմբատ իւր անուանէր՝ սիրալիւր դաշամբք ուխտից», բյուզանդական թագի մասին ոչ մի խոսք չի անում, թեև հիշում է արաբական թագը, «թագատուն Սմբատայ՝ ոստիկանն Ափշին»<sup>29</sup> և վերջինիս Սմբատին ցուցաբերած «բաղում պատիւս և պարգևս թագաւորականս»<sup>30</sup>:

Ու. Մաթևոսյանը գրում է, որ Բարթիկյանը իբր աղավաղել է Հովհաննես Դրասխանակերտցու շարագրանքը և իր կարծիքը հաստատելու համար «չատ թերի և միակողմանի է մեկնաբանել» Դրասխանակերտցու հաղորդումները: Հոգվածագրի ասելով «Դրասխանակերտցու հաղորդումներում կան շատ կարևոր մանրամասներ, որոնք վրիպել են (!) Բարթիկյանի ուշադրությունից, բայց հենց դրանք են հաստատում մեր պատմադրութ-

27 Նույն տեղում, էջ 326:

28 Հմմտ. ստորև, էջ 160:

29 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ եր տ ց ի, էջ 158-159:

30 Նույն տեղում, էջ 160:

յան մեջ ընդունված դրույթը» (էջ 170): Նկատի ունի Աշոտ I-ին բյուզանդական թագ «չնորհվելու» մասին վարկածը: Մաթևոսյանը շարունակում է. Բարթիկյանը Վասիլ կայսեր և Աշոտ I-ի դաշինքի մասին Հովհաննես կաթողիկոսի հաղորդածը «մեջբերում է կիսատ, վերջակետ դնելով շարադրանքի մեջտեղում: Այնինչ, - դրում է Մաթևոսյանը, - այդ հատվածի շարունակությունը շատ կարևոր է: Պատմիչի մոտ զրված է. «... որդի սիրելի գնա անունեկով»: այստեղ Բարթիկյանը դնում է վերջակետ, բայց վկայության անմիջապես շարունակությունն է. «և հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տերութեան իւրոյ» (էջ 170):

Մաթևոսյանը «մեկնաբանում է». «հաղորդակից լինել», նշանակում է «մասնակից լինել», «տեր լինել» տվյալ դեպքում «իր տերության թագավորությանը»:

Հովհաննես կաթողիկոսի գրածը հայերեն է՝ «յամենայն թագաւորութիւնս տերութեան իւրոյ»: «Թագաւորութիւնս» բառը ուղիղ խնդիր է՝ հայցական հոլովում: Նախադասության բովանդակությունը չհասկանալով, Մաթևոսյանը այն դարձնում է «իր տերության թագավորության», որտեղ «թագաւորութեան»-ն արդեն հանգման անուղղակի խնդիր է: Ի՞նչ է նշանակում «տերության թագավորություն»: «Տերության թագավորություն» լինում է: Եվ վերջապես ու՞մ տերության թագավորության<sup>31</sup>: Այս «չատ կարևոր մանրամասը», որ «վրիպել է» Բարթիկյանի ուշադրությունից, ինչպե՞ս է հաստատում «մեր պատմագրության մեջ ընդունված դրույթը» Վասիլ I-ի կողմից Աշոտ I-ին թագ ուղարկելու վերաբերյալ: Նա էի էլ պարզում այդ «իւրոյ» դերանվան ում վերաբերելը՝ Վասիլի՞ն, թե՞ Աշոտին: Պարզապես դրում է, թե «հաղորդակից լինել» նշանակում է «մասնակից լինել», «տեր լինել» տվյալ դեպքում «տեր լինել իր տերության թագավորությանը»:

Այստեղ անդին է նշել Մաթևոսյանի «դիտական» աշխատանքի սկզբունքները՝ լուծության մատենել ոչ «ձեռնտու» վկայությունները: Նիկողայոս Ադոնցի հենց Բագրատունիների փառավորմանը նվիրված աշխատությունը, որ քաջ ծանոթ է հոգվածագրին, կարծես գոյություն չունի: Ադոնցը ոչ մի նշանակություն չի տալիս բյուզանդական թագի մասին ուշ հեղինակների վկայություններին: Նախ և առաջ նա ցույց է տալիս այն դրդապատճառները, որոնք ստիպեցին խալիֆային իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն թագ ուղարկել: «Ոչ ոք չէր կարող երաշխավորել, արդյոք իշխանաց իշխանը, եթե մերժում ստանար ամիրապետից (թագի հարցում - Հ. Բ.) երեսը չէ՞ր դարձնի Արաբներից և կայսեր հովանավորության հետ միասին չէր ստանա ըզձալի թագը Բյուզանդիայից: Այս դեպքում Հայաստանը պետք է ընկներ ընդմիջտ արաբների ձեռքից և անցներ նրանց ոխերիմ թշնամիներին: Մուստասիմը գոհացում տվավ երկրի բաղձանքին...

31 Անհաջող պիտի համարել և Գ. Թոսունյանի թարգմանությունը. Վասիլ կայսրը Աշոտ I-ին «սիրելի որդի անվանելով և հաղորդակից դարձնելով իր տերության ու թագավորության ամեն ինչին» (Հ ո վ հ ա ն ն ե ս Գ ո ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Հայոց պատմություն: Աշխարհարար թարգմ. և ծանոթ. Գ. Թոսունյանի. Երևան, 1996, էջ 143): Նա «թագաւորութիւնս» (հայցական) նույնպես դարձրել է «թագավորության» (սեռական) և փորձել դրությունը փրկել «ու» շաղկապով, բայց ինչպե՞ս կարող է մի վեհապետ (տվյալ դեպքում իր ճիշտ համոզմամբ՝ Վասիլ կայսրը) սեփական պետությունը միաժամանակ կոչել «տերություն ու թագավորություն»:

Վասիլ կայսրը շտապեց շնորհավորել Աշոտի հաջողությունը, «խաղաղութեան, նուաճութեան և սիրոյ» դաշինք հաստատելով և «որդի սիրելի անուանելով» և «հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»: Վերջին խոսքերիս իմաստն է՝ առնել Աշոտին կայսերական հովանավորութեան տակ»<sup>32</sup>:

Հ. Բարթիկյանը «կրճատել է» այդ նախադասութիւնը, որովհետև այնտեղ խոսքը վերաբերում է կայսրութեան կողմից Բագրատունյաց պետութեան պաշտոնական ճանաչմանը և նրա հետ դիվանագիտական հարաբերութիւնների հաստատմանը, ինչը Բարթիկյանն ասել էր Դրասխանակերտցու խնդրո առարկա նախադասութեան սկզբի հիման վրա, իսկ սկիզբը հետևյալն է. «Այլ և մեծ կայսրն Յունաց Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ հաստատէր ընդ արքայն մերոյ Աշոտոյ որդի սիրելի զնա անուանելով»:

Նախադասութիւնը 160 տարի առաջ Սեն-Մարտենը թարգմանել է. «...en l'appelant son fis bien-aimé et en réglant que dans tout l' empire le royaume d'Arménie serait son allié particulier»: (Թարգմանութիւնը. «...նրան կոչելով իր սիրելի որդին և սահմանելով, որ համայն կայսրութեան մեջ Հայաստանի թագաւորութիւնը լինելու էր իր հատուկ դաշնակիցը»<sup>33</sup>):

Մաթևոսյանը, քննադատութեան մոլուցքով տարված, հաճախ Բարթիկյանի հետ այնպիսի հարցերում է բանավեճի մեջ մտնում, որ իր «հարվածը» բուժեցողական գալիս իրեն է հարվածում: Ե՛վ միջնադարյան աղբյուրներում, և՛ ժամանակակից գրականութեան մեջ, այդ թվում և մեր կողմից, Բագրատունիների պետութեան վերաբերյալ օգտագործվում է «Շիրակի տուն», «Շիրակի Բագրատունիներ» դարձվածքը: Մաթևոսյանը դրանում էլ է մեզ քննադատում: Բայց ոչ միայն «Շիրակի տուն» դարձվածքը հենց ինքը բազում անդամներ է օգտագործում [տե՛ս նրա «Բագրատունյաց Հայաստանը», էջ 155, 168, 169, 179, 201, 206, այլև «Շիրակի Բագրատունիներ» (նույն տեղում, էջ 224, 272, «Հայկական զինանշաններ», էջ 29, «Տաշիր-Ձորագետ (X դ. - XIII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 75]: Իրեն կաշկռել է, մեզ՝ ոչ<sup>34</sup>:

Ռ. Մաթևոսյանը ջանքեր է թափում 884-1267 թթ. միջոցը՝ Հովհաննես Դրասխանակերտցու և Վարդան Արևելցու (վերջինս իր պատմական երկը ավարտում է 1267 թ. դեպքերի նկարագրութեամբ) միջև ընկած չորսդարյա ժամանակագրական տարածութիւնը կրճատել, հայտարարելով, թե Վարդան Արևելցին Վասիլ I կայսեր Աշոտին թագ ուղարկելու մասին «փաս-

32 Ն. Ա դ ո ն ց. Բագրատունյաց փոռքը: Պատմական ուսումնասիրութիւններ. Պարիս, 1948, էջ 85-86:

33 Histoire d'Arménie par le Patriarch Jean VI dit Jean Catholicos. Traduction de l'arménien en français par M. J. Saint-Martin. Paris, 1841, p. 126. Ըստ երևույթին նրա սխալը վերաբերում է «յամենայն» բառին: Իրականում այն վերաբերում է «թագաւորութիւնս»-ին և ոչ «տերութեան»:

34 Հանրահռչակ գիտնական ակադեմիկոս Բ. Բ. Պիտրովսկին Ուրարտուի պատմութեանը նվիրված իր մեծարժեք մենագրութիւնը վերնագրել է «Ванское царство»: Թող Մաթևոսյանը նրան էլ սովորեցներ ինչպես գրել: Դա սովորական դարձվածք է, պետութիւնն անվանել կառավարութեան նստավայրի անունով: Երբ գրում են, թե այսինչ պետութեան առաջարկին Մոսկվան պատասխանեց այսպես, դա էի նշանակում, թե քաղաքն է պատասխանել կամ նրա քաղաքացիներն: Լուսկովը, այլ Մոսկվայում հաստատված Ռուսաստանի Դաշնութեան կառավարութիւնը:

տր» քաղում է նախորդ մատենագիրներից, այսինքն՝ Հովհաննես Դրասխանակերտցուն ժամանակագրական առումով ավելի մոտիկ կանգնած Հեղինակներից: Ձեռնարկած քայլը, իրոք, մտածված է: Իսկ մեր ո՞ր մի պատմիչը չի օգտվել իր նախորդներից: Նա սկսում է շատ հեռվից. ցույց է տալիս, որ Վարդանը շատ է օգտվել իր նախորդներից, օգտվել է Եվսեբիոս Կեսարացուց, Մովսես Խորենացուց, Փավստոս Բուզանդից, Ղազար Փարպեցուց (սրանք Դրասխանակերտցուց առաջ են դրել և մեր հարցին առնչություն չունեն): Ապա գալիս են Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը, Մատթեոս Ունհայեցին, Միքայել Ասորին (էջ 178): Բայց չէ՞ որ այս բոլորի երկերը պահպանվել են, բայց դրանցում Վասիլ I-ի թագի մասին խոսք չկա, Վարդանը մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ ի՞նչ կարող էր վերցնել:

Մաթևոսյանին մի ելք է մնում՝ անհայտի վրա շինել իր նախագծած կառույցը: Նա գրում է. «Վարդանը օգտվել է նաև այնպիսի սկզբնաղբյուրներից, որոնք այսօր համարվում են կորած: Վարդանը շատ է օգտվել XII դ. մատենագիր Մխիթար Անեցուց, Հովհաննես Վանականի երկից (XIII դ.), Վահրամի (Վահրամ որդի Տիգրանի, XI դ.) երկից: Միջնորդարար՝ Մխիթար Անեցու միջոցով օգտվել է Հովհաննես Կողբունի «Բագրատունիների Պատմությունից»: ...Ամենայն հավանականությամբ(!) Վասիլ կայսեր թագի մասին տեղեկությունը Վարդանը վերցրել է Կողբունի «Պատմությունից» (էջ 178): Եթե այդ բոլոր աղբյուրները այսօր համարվում են կորած, ապա Մաթևոսյանը որտեղի՞ց գիտե գրանց ըզմանդակության մասին: Անցնենք առաջ: Գուցե Մաթևոսյանը մեզ բացատրեր, ինչու՞ Վարդանը Հովհաննես Կողբունի «Բագրատունիների պատմությունից» պիտի օգտվեր Մխիթար Անեցու միջոցով, և ոչ՝ անմիջականորեն: Եվ Կողբունի «Բագրատունիների պատմությունը», և՛ Մխիթար Անեցու սլասմական երկի՝ խնդրին վերաբերող հատվածը չեն պահպանվել (պահպանվել է Մխիթար Անեցու Պատմության մինչև Մուհամմեդի Հանդես դալու շարադրանքը)<sup>35</sup>, ուստի հարց է ծագում, Մաթևոսյանը որտեղի՞ց գիտե, թե գրանցում ինչ էր գրված, և գրված կա՞ր արդյոք բյուզանդական թագի վերաբերյալ որևէ բան:

Այնուհետև. ինչպե՞ս կարող էր Վասիլը 336(+551=887) թ. ոչ առաջ Աշոտ I-ին թագ ուղարկել, եթե ինքը 886 թ. հանգուցյալ էր:

Տողբրիս հեղինակի «տեսությունը», թե Բյուզանդիան իր թագավորից (βασιλεύς - բասիլևս) դատ այլ բասիլևս չէր ճանաչում, և որ դա «կայսերական իղեան» էր, Ռ. Մաթևոսյանը շատ պարզունակ է բացատրում, թե Բարթիկյանը, լինելով բյուզանդադետ, ընդունում է «բյուզանդագիտության մեջ ամրացած ( ինչպես պիտի տեսնենք մի փոքր հետո, նաև իր Մաթևոսյանի մոտ ևս ամրացած (!) – Հ. Բ.) այն տեսությունը, ըստ որի կայսրությունը թագավոր (βασιλεύς) էր ճանաչում միայն իր կայսրին, իսկ

35 Մ խ ի թ ա ը Ա ն ե ց ի. Մատեան աշխարհավէպ Հանդիսարանաց, աշխատասիրությունը Հ. Գ. Մարգարյանի. Երևան, 1983, էջ 102-104: Հավելվածը («Պատմութիւն քաղաքին Յանույ») 1698 թ. Կոստանդնուպոլսում Մինաս Համթեցու կատարած բանաբաղումն է: Տե՛ս Յու. Հ. Վ ա ը ա ն յ ա ն. «Պատմութիւն քաղաքին Յանույ» բանաբաղության հեղինակի և ժամանակի հարցի շուրջը. – ՊԲՀ, 1986, №2, էջ 212-225:

մյուս պետությունների գլուխները (կառավարիչները) ճանաչվում էին միայն իշխան կամ իշխանաց իշխան» (էջ 168):

Այս նախադասության մեջ առկա է երկու սխալ: Նախ կայսերական իրազեան «ամրացած է» ոչ թե բյուզանդագիտության մեջ, այլ ամրացած էր բյուզանդական արքունիքում: Սրանք տարբեր բաներ են: Բյուզանդական արքունիքը *basileus* - բասիլևս չճանաչեց անդամ Կարլոս Մեծ կայսեր (800–814 թթ) ժառանգներին: Նմանապես XII դ., երբ Հոհենշտաուֆենների գերմանական Հարստությունը մեծ ջանքեր էր թափում իր իրավունքները ընդարձակելու համար, Բյուզանդիան համառորեն չէր ճանաչում նրանց կայսերական արժանավորությունը և պնդում, թե միայն բյուզանդական բասիլևսներն իրավունք ունեն կրելու կայսերական թագը: Բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսը, բյուզանդական քաղաքական դոկտրինայի բացարձակ համապատասխանությունը, իսահակ Անգելոս կայսրին անվանում է բասիլևս, իսկ Ֆրիդրիխ Բարբարոսային՝ ուեքս<sup>36</sup>:

Մաթևոսյանի երկրորդ սխալը: Բարթիկյանը երբեք չի գրել, թե կայսրությունը մյուս պետությունների գլուխները ճանաչում էր միայն իշխան (ἄρχων) կամ իշխանաց իշխան (ἄρχων τῶν ἀρχόντων): Կայսրությունը Կոստանդին Միրանաձինի վկայությամբ իշխան (ἄρχων) էր ճանաչում Հայաստանի իշխանությունների ղեկավարներին (Կոգովիտի, Տարոնի, Մոկքի, Անձևացյաց, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի և Սևորդյաց), Վրաստանին ենթակա իշխանությունների, Աղվանքին ենթակա իշխանությունների, Սարգիսիայի, Ամալֆիի, Գայետեի, Բուլղարիայի, Ռուսիայի, թուրքերի, պեչենեգների և Խորվաթիայի ղեկավարներին, իսկ «իշխանաց իշխան» (ἄρχων τῶν ἀρχόντων) միայն Բագրատունիներին և Արծրունիներին: Իբերիայի պարագլխին կոչում էր կուրապաղատ, Ալանիայի ղեկավարին՝ էքսուսիոկրատոր, Աբխազիայի՝ էքսուսիաստես, Ֆրանկիայի, Սաքսոնիայի, Բավարիայի, Գալլիայի, Գերմանիայի՝ ուեքս, Հոմերի, Կապուլայի՝ պրինցեպս, Աֆրիկայի, Եգիպտոսի ղեկավարներին՝ ամիրա, Վենետիկի, Նեապոլսի ղեկավարներին՝ դուքս, Խաղարիայի ղեկավարին՝ խաքան<sup>37</sup>:

Անդրադառնալով Կոստանդնուպոլիս այցելության առթիվ<sup>38</sup> Աչոտ II-ին ցուցաբերված արտակարգ ընդունելությանը, ինչպես գրում է Հովհաննես

36 История Византии. Т. II, М., 1967, с. 341.

37 Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին 6: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Բ: Կոստանդին Միրանաձին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151–154:

38 Հայտնի չէ, ինչի հիման վրա է Մաթևոսյանը Աչոտ II-ի այցելությունը Կոստանդնուպոլիս թվագրում 919 թ. «919 թ. կայսր Կոստանդին Միրանաձինի հրավերով Աչոտը մեկնեց Կ. Պոլիս (տե՛ս նրա «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը...», էջ 86): Թագավոր հռչակվելուց (913 թ.) վեց տարի ա՞նց են նրան հրավիրում: Դեպքի մասին կարևոր վկայություն ունի Թեոփանեսի Շարունակողը: «Այգ օրերին, – գրում է նա, – քաղաք (իմա՛ Կոստանդնուպոլիս – Հ. Բ.) եկավ իր ֆիզիկական ուժով մեծ անուն հանած Աչոտը, իշխանաց իշխանի (Սմբատ I-ի – Հ. Բ.) որդին: Նրա մասին պատմում են, թե նա երկաթե ձողը երկու ծայրից բռնելով, իր ամենի ուժով ձուռում էր այն և շրջանակաձև դարձնում. երկաթի ամուր բնությունը տեղի էր տալիս նրա ձեռքերի հզորության: Երբ նա քաղաք մտավ, նրան մեծ պատվով ընդունեց տիրուհին և ապա ճամփուղերից դեպի նրա երկիրը» (Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին 15: Բյուզանդական աղբյուրներ. գիրք Ե, Թեոփանեսի Շարունակող, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1990, էջ 228): Թեոփանեսի Շարունակողը սրանից անմիջապես հետո հիշատակում է բուլղար ցար Սիմեոնի կողմից

՚Իրասխանակերտցին, «Թաղաւորական բողբոջին» արժանի, Մաթևոսյանը նյրակացնում է. «Թագաւորական բողբոջ» նշանակում է թագավորական սոհմի շառավիղ», և տարակուսանք հայտնում, թե ինչպե՞ս Բարթիկյանը «պատմիչի հայորդած այս կարևոր մանրամասները ուղադրության չի արժանացրել»: Մաթևոսյանը Հովհաննես Դրասխանակերտցու Աշոտ II -ին տված գնահատականը «Թագաւորական բողբոջ» վերագրելով Կոստանդին Միրանածինին (վերջինս այն ժամանակ 7 տարեկան էր, և այդ 7 տարեկան մանուկը, ըստ Մաթևոսյանի, Աշոտ II-ին «ընդունում է թագավորական ճոխութեամբ» (էջ 171), երբ բյուզանդական հեղինակը դեպքերին ավելի տեղյակ, զրոււմ է, որ հայոց արքային ընդունողը Կոստանդին Միրանածինի մայրն էր), որոշում է, թե Բյուզանդիան Աշոտ II-ին թագավոր ճանաչեց: Բայց այդ հորջորջումը «Թագաւորական բողբոջ», կաթողիկոսը օգտագործում է մի քանի անգամ: «Իսկ ես, – գրում է կաթողիկոսը, – որ նախ չողայն ի թաղաւորական բողբոջն Աշոտոյ»<sup>39</sup>: Ինքը Մաթևոսյանը նշում է Արծրունյաց մեծ իշխան Աշոտին, որ էր «ի բողբոջից բուսոյ Սենեքերիմայ արքայի...»: Սա ի՞նչ կապ ունի բասիլևս ճանաչման հարցի հետ:

Բաղում անգամներ ասել ենք, մեկ էլ կրկենք: Հայոց համար, այդ թվում և Հովհաննես Դրասխանակերտցու Աշոտ II-ը թագավոր է, հայոց թագավոր, ինչպիսին էր իր հայրը՝ Սմբատը, և պապը՝ Աշոտ I-ը: Ո՞վ է դրա մասին վիճում: Ամբողջ վեճը կայանում է նրանում, թե Բյուզանդիան այդ երեքին βασιλεύς - բասիլևս ճանաչե՞ց, թե ոչ: Կարիք չկա այդ երկու տարբեր հարցերը իրար խառնել, ջուրը պղտորել, նրանում ձուկ որսալու համար: Բյուզանդիան Բագրատունի թագավորին միշտ կոչել է իշխանաց իշխան (ἄρχων τῶν ἀρχόντων), և դա շատ լավ դիտե Մաթևոսյանը: Վերջինս, սակայն, դա փորձում է ժխտել նաև Ստեփանոս Տարոնեցու միջոցով: «Այնինչ, – գրում է Մաթևոսյանը, – Ասողիկը գրում է հետևյալը. «Նորոգումն թագաւորութեան Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ, որ եղև յաւուրս Վասլի Յունաց թագաւորին և կամակցութեամբ նորին»: Մաթևոսյանը շարունակում է. «Ամբատի մասին գրում է. «Իսկ զկնի Աշոտոյ ի յՅն թուականին թագաւորէ Սմբատ որդի նորին ամս ԻԴ, կամակցութեամբ Լևոն թագաւորի Յունաց»: Եվ որոշում է. «Պատմիչի խոսքերից պարզ երևում է, որ Վասիլ կայսեր «կամակցութեամբ» Աշոտ Բագրատունու օրոք վերականգնվեց Հայոց թագավորութիւնը, այլ ոչ թե իշխանութիւնը»: Ավելի տարօրինակ է նա բացատրում Վասիլ I-ի «կամակցութիւնը» Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքին նվիրված իր գրքում: «Վասիլ Ա-ի կամակցութիւնը, – գրում է նա, – ինքնին ենթադրում է Աշոտի թագավորական իրավունքների ճանաչումը, իսկ ճանաչումը կատարվում է թագ ուղարկելու միջոցով»<sup>40</sup>: Իրականում կամակցութիւն

Ադրիանուպոլսի գրավումը: Քանի որ դա տեղի ունեցավ 914 թ., ն. Ազոնցը Աշոտ II-ի Կոստանդնուպոլիս այցելութիւնը թվագրում է 913 թ.: (տե՛ս N.A d o n t z. Asot Erkat ou de fer, roi d'Armenie de 913 a 929. – Etudes Arméno-byzantines. Lisbonne 1965, p. 265-266): Աշոտին ընդունողը տիրուհին էր՝ Կոստանդին Միրանածինի մայրը, քանի որ որդին 7 տարեկան էր, իսկ մայրը նրա խնամակալներն էին: Խնամակալները թագ շնորհելու իրավունքը չուներին:

<sup>39</sup> Հ ո վ հ ա ն ն ե ս Դրասխանակերտցի, էջ 357:

<sup>40</sup> Ռ. Մ ա թ է ո ս յ ա ն. Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը. Երևան, 1990, էջ 99:

նշանակում է «Համակամուլթիւն. միաբան հաւանութիւն. հաճութիւն. յօժարութիւն. թոյլտուութիւն. զիջումն»<sup>41</sup>: Բայց այս երկու նախադասութիւններում ասվում է Հայոց թագավորութեան վերականգնման, և ոչ կայսեր կողմից այն որպէս այդպիսին ճանաչվելու մասին: Սրանք, ինչպէս ասել ենք, ասարբեր բաներ են, եթե այդ հասարակ բանը չի ուզում հողվածագիրը հասկանալ, էլ ինչո՞ւ է ձեռնարկել այդ հարցի շուրջ հողված գրելուն:

Մաթևոսյանն անցնում է Աշոտի՝ Կոստանդնուպոլսում ստացած նվերներին, որոնց բացատրութիւնը թողնենք մասնագետներին, քանզի «ծիրանագգեաց փառօք»-ին, «ոսկետտուն վառիւք»-ին, «ոսկե հուրն» (sic!) հանդերձիւք»-ին նրա տված «բացատրութիւնից» բան չես հասկանա՞լ<sup>42</sup>:

Նշենք այստեղ, որ Հովհաննէս Դրասխանակետցին այնքան էլ քաջատեղյակ չէ Կոստանդնուպոլսում տիրող իրագրութեանը: Նա գործող անձ է համարում Կոստանդին Ծիրանածինին, որը, ինչպէս բաղմիցս ցույց ենք տվել, Աշոտ II-ի մայրաքաղաք կատարած այցելութեան ժամանակ 7 տարեկան էր և ոչ մի մասնակցութիւն ունենալ չէր կարող: Իսկ Վասիլ կայսեր մասին կաթողիկոսը դրում է. «Բայց և արքայն Հոռոմոց Բարսեղ (867-886 թթ.), իբրև լուաւ զայս ոճիրս չարի զմեօք մածեալ՝ բազում զօրու հորդան տուեալ գալ յօղնականութիւն Սմբատայ՝ (890-913 թթ) յանկարծակի ժամանեալ նմա ելք հասարակաց կենաց մարդկան և վախճանեալ, թագաւորէ ընդ նորա եղբայր նորուն Աղէքսանդր»<sup>43</sup>:

Վասիլ I-ը վախճանված էր Սմբատի թագավոր օժվելուց չորս տարի առաջ, Յոսուֆ ամիրայի խժոժութիւնները տեղի էին ունենում 913 թ., Վասիլը, որ մահացել էր 886 թ., չէր կարող Սմբատին օգնութեան դալ 27 տարի հետո, Աղէքսանդրը Վասիլ I-ի եղբայրը չէր, այլ որդին:

Հայոց թագավոր - բյուզանդական βασιλεύς - բասիլևս ինդիրը իրար հետ կապված երկու կողմ ունի: Չի կարելի երկուսից մեկը առաջ քաշել, չանդրադառնալով մյուսին: Չի կարելի ասել, թե Բյուզանդիան թագ է ուղարկել և չմերժել Հայ թագավորին Բյուզանդիայի կողմից նրան տրվող «իշխանաց իշխան» տիտղոսը: Մաթևոսյանը դա շատ լավ է հասկանում: Եվ աշխատում է երկու ճակատում: Ուրեմն. Բյուզանդիան ինչպե՞ս կարող էր Հայ Բաղրատունիներին թագավոր (Βασιλεύς) ճանաչել և բասիլևսի թագ ուղարկել, երբ հենց կայսերական իդեայի համաձայն նրանց իր վասալներն է համարում: Մի կողմ թողնենք իրականութեանը չհամապատաս-

41 Նոր Բազիրք Հայկազեան լեզուի, «կամակցութիւն» բառը:

42 Ահա նրա «մեկնաբանութիւնը». «Այդ նշանակում է, որ Աշոտին պարգևում են ոսկեգույն (!) հանդերձանք, «տտուն վառեր»: «Տտուն» (տուտն) բառը նշանակում է ծայր, թե, վերջավորութիւն, նաև գրոշակ հանդերձի, ծոպ: «Վառ» բառը նշանակում է զինանշան»: Մաթևոսյանի համոզմամբ, Աշոտ II-ը Կոստանդնուպոլսում ստացավ ոչ միայն կայսերական թագ, այլև կայսերական... զինանշան: Մաթևոսյանը շարունակում է. «Ուրեմն Աշոտը արժանացել է ոսկեգույն հանդերձանքի և զինական սիմվոլիկայի (!), իսկ ոսկեգույնը հատուկ է թագավորներին»: Մի փոքր հետո. «Իսկ ծիրանագույնը հատուկ էր միայն կայսրերին և թագավորներին» (էջ 171): Հողվածագիրը շարունակում է. «Նրան տրվեցին նաև «ծիրանագգեաց փառօք»: (Գործիական հոլովում ուղիղ ինգիր լինում է): «Փառք նշանակում է նաև ընծայվող պատիվ, մեծարանք, մեծութիւն, նշան մեծութեան, զարգ և այլն» (էջ 171): Գ. Թոսունյանի թարգմանութիւնը. «Նրան զարգարում էր ծիրանագգեստ փառօքով, երևելի ոսկեհյուս հանդերձանքով, ոսկեծայր շղարչի շորով» (նույն տեղում, էջ 287):

43 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս ի ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 233:

խանոդ այդ հանգամանքը, բայց ձևականորեն դա այդպես էր: «Իշխանաց իշխան Աշոտից (Աշոտ I-ից – Ղ. Բ.) առաջ, – դրում է Կոստանդին Ծիրանածինը, – (սա Պարսկաստանի ամիրա Ապոստոսյի (ուստիկան Յուսուֆ աբու Կասիմ իրն արու Սաջը – Ղ. Բ.) կողմից գլխատված իշխանաց իշխան Ամբատի հայրն էր, Սմբատի, որն ունեցավ երկու որդի՝ Աշոտին (Աշոտ II – Ղ. Բ.), որն իրենից հետո դարձավ իշխանաց իշխան, և Ապասակին (Աբաս – Ղ. Բ.), որը հետագայում մագիստրոսի աստիճանին արժանացավ)։ այդ երեք ամրոցները, այսինքն Պերկրին, Խալիաթը և Արգեսը<sup>44</sup>, գտնվում էին Պարսկաստանի տիրապետության տակ: Իշխանաց իշխանը նստում էր Մեծ Հայքում՝ Կարս ամրոցում և տիրում էր վերոհիշյալ երեք ամրոցներին»<sup>45</sup>:

Միանգամայն պարզ է, որ բյուզանդական երեք թագ «ստացած» Բագրատունիներին՝ Աշոտ I-ին, Սմբատ I-ին և Աշոտ II-ին Ծիրանածինը կոչում է իշխանաց իշխան: Նրանց նա իշխանաց իշխան է անվանում այլ դեպքերում ևս: «Ապա այս երեք ամրոցները, – գրում է նա, – վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտի՝ Սմբատի հոր, երկրորդ Աշոտի և մագիստրոս Ապասակի պապի ժամանակներից սկսյալ մինչև երկրորդ Աշոտի՝ իշխանաց իշխանի ժամանակ դառնում էին իշխանաց իշխանի գերիշխանության ներքո, և հարկ էին վճարում նրան: Բայց Մանցիկերտ ամրոցը, Ապասունի երկիրը, Կորեն և Խարկան<sup>46</sup> ևս գտնվում էին իշխանաց իշխանի տիրապետության ներքո: ...Քանի որ իշխանաց իշխանը հռոմայեցիների կայսեր ծառան է համարվում, որովհետև կայսրն է նշանակում նրան և ընձեռում այդ պատիվը<sup>47</sup>, ապա պարզ է, որ նրա տիրապետության տակ գտնվող ամրոցները, քաղաքներն ու գյուղերը հռոմայեցիների կայսեր (սեփականության են) են»<sup>48</sup>:

Մի փաստ էլ նշենք Դրասխանակերտցուց. «Թագաւորն Հոռոմոց Լևոն ոչ ինչ ստիաւ նախախնամէր զարքայ Սմբատ իբրև զորդի սիրելի անքակտութեամբ ընդ նմա բերելով յուխտ միարանական սիրոյ, և բազում ընծայս և պարգևս և պատիւս ամ յամէ առաքէր»<sup>49</sup>: Բայց ոչ թագ: «Իսկ և Սմբատ ի շնորհակալութիւն բարբերաբութեան արքայի Հոռոմոց առատաձիր պարգևօք հատուցանէր զզարձ փոխարինին տասնապատիկ յաւելուածով իբրև վեհադուսնի քան զինքն և հօր հարազատի»<sup>50</sup>:

Այսքանից հետո հնարավոր է պնդել, թե կայսրը իր «ծառային» և «որդուն» պիտի իրեն հավասարը համարեր և իր թագի նմանակը նրան շնորհեր:

Ի. Մաթևոսյանը միանգամայն լուրջ և «մասնագիտորեն» խոսում է և Բյուզանդական կայսրության ռազմավարական ու դիվանագիտական

44 Բերկրին, Խալիթը և Արգեսը:

45 Կ ո ս ա ն դ ի ն Ծ ի ր ա ն ա ծ ի ն, էջ 10:

46 Մանազկերտը, Ապահունիքը, Կորո ձորը, Հարքը:

47 Հմմտ. Ստեփանոս Տարոնեցու գրածը. «Նորոգումն թագաւորութեան Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ, որ եղև յաւուրս Վասլի Յունաց թագաւորին և կամակցութեամբ նորին»: Եվ «Իսկ զկնի Աշոտոյ յՅն թուականին թագաւորէ Սմբատ որդին նորա ամս ԲԴ. կամակցութեամբ Լևոն թագաւորին Յունաց» (Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 157, 159): Ոչ մի խոսք բյուզանդական թագի մասին:

48 Կ ո ս ա ն դ ի ն Ծ ի ր ա ն ա ծ ի ն, էջ 11:

49 Հ ո վ հ ա ն ն Ե ս Դ Ր ա ս խ ա ն ա կ Ե ը տ ց ի, էջ 199–200:

50 Նույն տեղում:



Հնարավոր սխալների մասին, եթե այն չվարվեր այնպես, ինչպես ճիշտ է դատում Հոդվածագիրը: Նա մտահոգված է անգամ Բյուզանդիայի քաղաքական շահերով: «Հայոց գահակալին, – գրում է նա, – ճանաչել իշխանաց իշխանի կարգավիճակով Բյուզանդիայի համար անտրամարանական էր և Հակասում էր նրա քաղաքական շահերին... Կայսրության կողմից այդ պետության ճանաչումը լուր որպես իշխանություն կլիներ ռազմավարական ու դիվանագիտական կուպիտ սխալ(!), կայսրությանը անհրաժեշտ էր խալիֆայության արևելյան (!)<sup>51</sup> սահմաններում ունենալ հուսալի դաշնակից, որպիսին Հայաստանն էր» (էջ 177):

Արդ, եթե Բյուզանդիան «ելնելով իր շահերից», Բագրատունյաց Հայաստանը, ըստ Մաթևոսյանի, ճանաչեց որպես թագավորություն, նշանակում է ի դեմս նրա ունեցավ «հուսալի դաշնակից»: Այդ «դաշինքը» Աշոտ II-ի մահով 929 թ. վերացավ: Նրանից հետո թագավորած հայ Բագրատունիներին բյուզանդական թագ չուղարկվեց: Ի՞նչն էր պատճառը: Եվ վերջապես ինչու՞մ արտահայտվեց այդ «դաշինքը»: Տարոնի իշխանության ամենաստոր ճանապարհով վերացմամբ, խեղդամահ արված Տայքի կուրապաղատով և Տայքի իշխանության վերացմամբ, փաստորեն աքսոր ուղարկված Վասպուրականի թագավորով և Արծրունյաց թագավորության վերացմամբ, վեց ամսվա ընթացքում երկու Բագրատունի թագավորների (Հովհաննես-Սմբատի և Աշոտ IV-ի) «մահով», քրիստոնյա Բյուզանդիայի դաշինքով Դվինի մահմեդական ամիրայի հետ և վերջինիս կողմից Գաղիկ II-ի թիկունքին դաշույն խրելով ու Բագրատունիների թագավորության վերացմամբ, Հայոց կաթողիկոսարանի փակումով և կաթողիկոսի Հայաստանից աքսորումով, Բագրատունիների 50000-անոց բանակի լուծարումով և սելջուկ թուրքերի առաջ դեպի Հայաստան մուտքի դռները բացելով, վերջապես վերջին Բագրատունի Գագիկ II-ին աղեղի լարով խեղդամահ անելով: Այս է Մաթևոսյանի «Հայաստան-Բյուզանդիա» հուսալի դաշինքը:

Որ Բյուզանդիան Բագրատունի և Արծրունի թագավորներին իշխանաց իշխան էր ճանաչում և ոչ թագավոր βασιλευς – բասիլևս, Մաթևոսյանը շատ լավ գիտե և իզուր է խորամանկություն անում, հույսը դնելով ընթերցողի անգիտության վրա: Հենց ինքը, Մաթևոսյանն էր գրում. «Բյուզանդական կայսր և պատմիչ Կոստանգին Միրանաժինը իր երկերից մեկում՝ «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատության 2-րդ գրքի 48-րդ գլխում, որը կոչվում է «Այլազգիներին ուղարկվող նամակների վերնագրերը»<sup>52</sup>, թվարկում է Հայաստանի իշխանությունները, որոնք գոյություն ունեին Մոկացու աթոռակալության շրջանում»<sup>53</sup>: Մաթևոսյանը շարունակում է. «Հայաստանին վերաբերող հատվածում ասված է. «Մեծ Հայք՝ իշխանաց իշխանին...: Ասպուրականի, այն է՝ Վասպուրականի իշխանին, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է

51 Հայոց համար խալիֆաթը «հարաւակողմն» է (Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս - ի ս ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 7, 260, 281): Ուստի խալիֆաթի համար Հայաստանը արևելք չէ, այլ հյուսիս: Արևելք է Բյուզանդիայի համար...

52 Մաթևոսյանը հղում է մեր «Բյուզանդական աղբյուրների» Բ գրքի 150-րդ էջին:

53 Անանիա Մոկացի կաթողիկոսը աթոռակալել է 946–968 թթ.:

ստացել»<sup>54</sup>: Նկատի ունի Դագիկ Արծրունու 908 թ. թագավոր հռչակվելը: Մաթևոսյանը տեղյակ է և Կոստանդին Միրանաձինի մի այլ աշխատությունների հարցին վերաբերող փաստերին. կայսրը, գրում է նա, «Բագրատունի Հայոց թագավորին (տվյալ դեպքում խոսքը Աբասի մասին է՝ 929-953) անվանում է իշխանաց իշխան և առաջինը»<sup>55</sup>: Ահա և իր գնահատականը. «Սա շատ կարևոր փաստ է. այս անվանակոչումը ցույց է տալիս, որ Բագրատունի թագավորի (ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ԸՍՏ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ) իրավունքները տարածվում էին ոչ միայն Հայաստանի որևէ երկրամասի՝ Բագրատունյաց տոհմական տիրույթների վրա, այլ ամբողջ Հայաստանի: «Իշխանաց իշխան» տվյալ դեպքում նշանակում է երկրի թագավոր»<sup>56</sup>:

Այսպիսով, Մաթևոսյանի հոդվածի վերնագրում հիշատակված երեք Բագրատունի թագավորներին էլ՝ Աշոտ I-ին, Սմբատ I-ին և Աշոտ II-ին Կոստանդին Միրանաձինը անվանում է իշխանաց իշխան: Նա Աշոտ II-ին, որպես իշխանաց իշխան հիշատակում է մի անգամ ևս՝ ժամանակին Տարոնի իշխան Գրիգորի Լևոն VI կայսեր կողմից մագիստրոսի պատվաստիճանի շնորհման առթիվ. «Կայսեր դեսպի Տարոնի իշխանը ցուցաբերած սիրալիրությունը Վասպուրականի իշխան Գագիկի, Իբերիայի կուրապաղատ Ատրներսեսի և իշխանաց իշխան Աշոտիկի ((Աշոտ II – Հ. Բ.) նախանձը գրգռեց»: Իրենք բողոքեցին Կոստանդին Միրանաձինին, ասելով. Տարոնի իշխանը «մեղանից ի՞նչ ավել ծառայություններ է մատուցում կամ մեղանից ինչն՞ով է ավելի օգուտ տալիս հոռմայեցիներին»<sup>57</sup>:

Վերջապես հիշենք և Կոստանդնուպոլսի սլատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901-907, 912-925 թթ.) երկու նամակները, հասցեագրված ἄρχων τῶν ἀρχόντων-ին՝ իշխանաց իշխան Սմբատ I-ին, որոնց Հայերեն թարգմանությունները քաջ ծանոթ է Մաթևոսյանին<sup>58</sup>: Իրեն Հայտնի այսքան վկայությունները լուռության մատնել, անտեսել և սևով սպիտակի վրա գրել, թե «Հալոց գահակալին ճանաչել իշխանաց իշխանի կարգավիճակով Բյուզանդիայի համար անտրամաբանական էր և հակասում էր նրա քաղաքական շահերին», այլ կերպ չի կարելի ընդլծագրել, քան աչքակապություն:

Վերևում ներկայացվեց խնդրի վերաբերյալ կայսրություն արքունիքի տեսակետը: Ահա և Հայկական կողմինը, արձանագրված դեպքերին ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի կողմից: Իր նամակում կայսերը՝ Սմբատ I Բագրատունու մասին նա գրում է. նա «արժանացաւ անուանիլ ի ձէնջ որդի ձեզ ծառայն ձեր»<sup>59</sup>: Սմբատի նահատակութ-

54 Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 132–133: Չորս էջ հետո (էջ 137) նա գրում է. թե Միրանաձինի կողմից այստեղ ասված է. «Արծրունի գահակալը անվանված է Վասպուրականի թագավոր»: Իրոք, որ ձախ ձեռքը չի իմանում ինչ է անում անը:

55 Նույն տեղում, էջ 137:

56 Նույն տեղում, էջ 138:

57 Կ ո ս տ ա ն դ ի ն Մ ի ր ա ն ա ձ ի ն, էջ 7:

58 Nicholas I Patriarch of Constantinople. Letters. Greek Text and English Translation by R. J. H. Jenkins and L. G. Westerink, Washington, 1973. p. 446. Հիշյալ նամակների հայերեն թարգմանությունը՝ Հ. Մ. Բ ա Ր Թ ի կ յ ա ն. Կոստանդնուպոլսի սլատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101–րդ և 139–րդ թղթերը՝ Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ I թագավորին. – ՊԲՀ, 1966, № 4, էջ 228:

59 Հ ո վ Վ ա ն ն Ե ս Դ ր ա ս ի ա ն ա կ Ե ր տ ց ի, էջ 276–277:

յունը նկատի ունենալով, նա ավելացնում է. «մեք զրկեալք մնացաք ի խնամոյ հաւատարիմ ծառային ձերոյ»<sup>60</sup>: Կաթողիկոսը նույնպիսի որակում տալիս է և Աշոտ II-ին: Նա, «մինչդեռ էր ի Հռովմայեցւոց տերութեանն՝ ապա մեծաւ շնորհակալութեամբ և բարեխորհուրդ ծառայական խոստմամբ խնդրէ հրաժեշտ դառնալոյ ի հայրենի տերութիւնն ի կայսերէ»<sup>61</sup>: Երբ Կոստանդին Մոնոմախը պաշարել էր Անին (1045 թ.) և ջանում էր վերացնել Բագրատունիների թագավորութիւնը, Գագիկ II-ը, Հովհաննես Սկիւիցեսի վկայութեամբ, «թեև իրեն հռովմայեցիների ծառան էր խոստովանում, չէր ուզում հրաժարվել հորենական իշխանութիւնից»<sup>62</sup>:

Հ. Բարթիկյանը բյուզանդական կայսեր կողմից Բագրատունիներին *basileus*-ի թագ շնորհելու մասին վարկածը ժխտում էր և այն հանգամանքով, որ Բագրատունի թագավորների պահպանված քանդակներում նրանց գլխին արաբական թագն է՝ չալման և ոչ բյուզանդական թագը: «Այս տրամաբանութիւնը ընդունելի չէ, — առարկում է Մաթևոսյանը, — Հայոց թագավորներն ունեին երեք տեսակի թագ՝ հայկական, արաբական և բյուզանդական... Չալմաները ... Հայոց թագավորները (այդ թվում՝ Սմբատ II-ը 977-990 թթ. և Գագիկ I-ը 990-1020 թթ. — Հ. Բ.) հագնում էին հանդիսավոր և պաշտոնական արարողութիւնների ժամանակ (!)» (էջ 172-173): Սա էլ Մաթևոսյանի «տրամաբանութիւնն» է: Իսկ հայկական և «բյուզանդական» թագը ե՛րբ էին հագնում, շուկա կամ բաղնիք գնալի՞ս: Հանդիսավոր թափորով Քրիստոսի Մննդյան տոնին կամ Զատիկին եկեղեցի գնալիս մոտուլմանական չալմա՞ն էին հագնում: Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված Գագիկ I-ի չալմայակիր արձանը և Սմբատ II-ի չալմայակիր քանդակը Հաղրատում ո՞ր «հանդիսավոր և պաշտոնական արարողութիւն» պահն են ներկայացնում: Սմբատ II-ը չալմայով Հաղբատի տաճարի պատին և Գագիկ I Արծրունին հայկական թագով Աղթամարի Սուրբ Խաչ տաճարի պատին նույն դիրքում են պատկերված, երկուսն էլ կանգնած՝ իրենց կառուցած եկեղեցիների մակետը ձեռքին: Ուրեմն Սմբատը պաշտոնական արարողութիւն պահն է ներկայացնում, իսկ Գագիկը՝ ոչ: Ու՞ր է տրամաբանութիւնը:

Գալով Գագիկ Արծրունու թագին, Մաթևոսյանը մատնացույց է անում Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու քանդակը՝ հայկական թագով, խոսափելով նշել, որ նա 908 թ. արաբ խալիֆայից թագ ստացավ, որն, անկասկած, հիշյալ թագը չէր, այլ չալմա: Իր ոլորապտույտ մեկնաբանութիւնը. «Հայկական թագը Գագիկ Արծրունու գլխին է՝ որպես խալիֆայից ճանաչված Հայոց թագավոր» (էջ 172): Խալիֆան Գագիկ Արծրունուն հայկական թագ է շնորհել... Նշենք այստեղ, որ Մաթևոսյանը իր հոդվածի 172-րդ էջում ցույց է տալիս, որ իր բերած №1 նկարում պատկերված է Գագիկ Արծրունին, իսկ 176-րդ էջում նույն №1 նկարում պատկերված է Սմբատ I-ը:

60 Նույն տեղում, էջ 277:

61 Նույն տեղում, էջ 292:

62 Օտտո աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 10: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Գ: Հովհաննես Սկիւիցես: Թարգմանութիւն բնագրից, առաջաբան և ծանոթագրութիւններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 147:

Մաթևոսյանը վստահ հայտարարելով, թե «Հայոց թագավորները թագերը ստացել էին նաև բյուզանդական կայսրերից» (էջ 173), փորձում է միտքը հաստատել նաև «փաստը վկայող» գրավոր այլ աղբյուրների հաղորդածով: Ամենից առաջ նա հիշատակում է կարծեցյալ Շապուհ Բագրատունու Պատմությունը, որ նախ հրատարակվեց որպես Շապուհի գործ, հետագայում համարվեց Անանուն, և ելնելով նրա առասպելապատում բովանդակությունից, անվանվեց «Պատմութիւն Անանուն զրուցագրի»: Անանունի գրքում կա հետևյալ նախագասությունը. «Եւ մեռաւ Աշոտ Բագրատունի և թագաւորեաց տանն Հայոց Սմբատ, որդի Աշոտոյ ... և կապեաց նմա թագ արքայն Հոռոմոց Ռոմանոսն և սիրէր զնա յոյժ»: Այդ գործը մենք բնութագրել էինք առասպելապատում, Մաթևոսյանը՝ «չատ արժեքավոր»: Անանունի վերոհիշյալ տվյալը ժամանակին նա օգտագործել էր ապացուցելու համար, թե Վասիլ I կայսրը թագ էր ուղարկել ... Աշոտ I-ին, իսկ մեր առարկությանը, թե Անանունը Աշոտ չի ասում, Սմբատ է ասում, պատասխանը ավելի քան տարօրինակ էր: Եթե Սմբատին տվել է, նշանակում է Աշոտին էլ է տվել: Մենք մի առարկություն էլ էինք արել. բայց չէ՞ որ Ռոմանոսը կայսր դարձավ (ավելի ճիշտ՝ Կոստանդին Ծիրանածինի կայսերակիցը) 920 թ., 913 թ. ինչպե՞ս էր նա թագ շնորհում: Մաթևոսյանն այժմ դրա ելքն էլ է դտնում: «Անանունի հաղորդումը, — գրում է նա, — շատ արժեքավոր է և չի կարելի այն անտեսել: Պարզապես մենք պետք է ճշտելնք Անանունի կողմից շփոթած (ինչու՞ միայն Անանունի, նաև այդ «շփոթած» փաստը շփոթածին - Ղ.Բ.) կայսրերի անունները՝ Ռոմանոսի փոխարեն սկստք է լինի Կոստանդին Ծիրանածին (գահակալել է 913-959 թթ., 920-944 թթ. Ռոմանոսի հետ): Օգտվելով առիթից, կատարում ենք այդ ճշտումը, միաժամտնակ հաստատում Անանունի հաղորդման կարևորությունը և վավերականությունը կայսեր թագի վերաբերյալ»:

Անհաջող եք կատարում ճշտումը, դարձյալ չի բռնում, հարգելի ընդդիմախոս: Կոստանդին Ծիրանածինը թագավորել է 913 թ. (7 տարեկան հասակում մի իսումբ անձանց, այդ թվում և իր մոր խնամակալությունը), Սմբատ արքան նահատակվել է 913 թ.: Թագ են ուղարկում դահ բարձրանալու տարին և առիթով, բայց ոչ մահվան տարին (կամ հետմահու): Կոստանդին Ծիրանածինը 913 թ., ինչպես ասացինք, 7 տարեկան էր, նա չէր կարող Սմբատին թագ շնորհել: Ահա և Անանունի «չատ արժեքավոր» տվյալը<sup>63</sup>: Նկատենք այստեղ, որ Հովհաննես Դրասխանակերտցին, որ Սմբատ I-ին մշտապես «թագաւոր», «արքայ» է անվանում, բյուզանդական կայսրին դրած նամակում (բնական է հունարեն) խուսափում է նրան «թագավոր» կոչել, որովհետև հունարենում ուզեր-չուզեր պիտի գրեր

63 Մաթևոսյանը կարծում է ամեն թագավոր փոխվելիս, Բյուզանդիան նոր թագավորին թագ էր ուղարկում: Ստացվում է լավ հավաքածու: Աշոտ II-ից հետո թագավորած Հայ Բագրատունիներին ուրեմն թագ չի՞ ուղարկել, նրանց βασιλεύς - բասիլևս չի՞ ճանաչել ... Ի՞նչն էր պատճառը: Թագ, եթե ուղարկվում է, ուղարկվում է մեկ անգամ: Լևոն II-ը թագ ստացավ որպես ոսբս և վերջ: Շարունակություն չեղավ, քանզի հաջորդներն էլ արգեն ոսբս էին:

64 Անանունի աշխարհագրական «գիտելիքները». «և առեալ տիրեաց նմա (Սմբատը - Ղ.Բ.) զՓայտակարան, որ է Տփղիս» (История Анонимного повествователя. Псевдо-Шапух Багратуни. Перевод с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1972, с. 159).

βασιλευς - բասիլևս: Նա գրում է. «Զի՞նչ բան ապա աստ յառաջ բերից յաղագս Սմբատայ Բագրատունւոյ և բոլորից արևելեայցս գլխաւորի, որ հոգեպէս արժանացաւ անուանիլ ի ձէնջ որդի ձեզ ծառայն ձեր»<sup>65</sup>:

Այժմ Անանուն գրուցագրի Պատմության մեր գնահատականի վերաբերյալ: Դա մերը չէ, այդ գնահատականը տվել են բոլորը, ով անդրադարձել է այդ Պատմությանը, անգամ բնագրի հրատարակիչը և ուսուցիչները, որը, որպէս այդպիսին, կարող էր իր գնահատականի մեջ լինել ավելի զուսպ և մեղմ: Նա գրում է. "С точки зрения жанровой "История Анонимного повествователя" представляет собой свободное сочетание мотивов исторических сказаний с повестями новеллистического характера"<sup>66</sup>.

"История Анонимного повествователя" представляет один из интереснейших памятников армянской средневековой художественной прозы<sup>67</sup>.

"Примеры исторической путаницы можно еще продолжить"<sup>68</sup>.

Ահա և այլ աղբյուրագետների գնահատականը. «Հրատարակված բնագիրը, հիրավի, իր ժամանակին ժողովրդի մեջ բերնեբերան անցած պատմական զրույցների կցկտուր տեղեկությունների հավաքածու է, գրի առնված գեղջկական բարբառով»<sup>69</sup>:

«Շապուհ Բագրատունին պարզագույն ձևով շարադրել է ծերունիների զրույցները, վերարտադրել Սմբատ Սպարապետի, Աշոտ Բագրատունու իշխանության և թագավորության ժամանակների պատմությունը»<sup>70</sup>:

«Ժողովածուի երկու մասերի զրույցները լի են պատմական խառնաշփոթություններով ու անախրոնիզմներով»<sup>71</sup>:

«Պատմությունը համեմված է բազմապիսի առասպելաբանություններով, որոնց հավաստիությունն ու պատմականությունը ամենևին չի քննում հեղինակը: Անանունը ուշադրություն չի դարձնում պատմության ժամանակագրական հարցերին և գրեթե չի հիշատակում ոչ մի թվական ... Նա շատ բանով զիջում է նախորդ և իրենից հետո ապրած հեղինակներին»<sup>72</sup>:

Օրինակները կարելի է բազմապատկել: Եվ այդ բոլորից հետո՝ «Հ. Բարթիկյանը Անանունի Պատմությունը բոլորովին անհիմն կերպով անվանում է «առասպելապատում»<sup>73</sup>:

Հովհաննես Դրասխանակերտցուց հետո Մաթևոսյանը հիշում է Բագրատունիների թագավորության հռչակումից 300 տարի անց գրված Սամվել Անեցու աշխատությունը, որում հանդիպում է Վարդան Արևելցու

65 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր ա ց ի, էջ 276–277:

66 История Анонимного повествователя, с. 9.

67 Նույն տեղում, էջ 10:

68 Նույն տեղում, էջ 26:

69 Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 321:

70 Նույն տեղում, էջ 320:

71 Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության. Երևան, 1981, էջ 102:

72 Ստ. Մ Ե Լ Ի Ք – Բ ա խ շ յ ա ն. Հայոց պատմության աղբյուրագիտություն. Երևան, 1989, էջ 145:

73 Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) բյուզանդական թագը, էջ 173:

Հունական թագի մասին հիշած անհիմն ավանդությունը, չանդրադառնալով շարադրանքում առկա շփոթին: Հողվածագիրը ցույց է տալիս, որ նա «Աշոտ I-ի վերաբերյալ ունի հետևյալ վկայությունը. «Եւ ասլա յաղազս առաւել լաւութեան թագաւորական պսակաւն ճոխաբար թագաւորեալ թագ կապեալ յերկոցունց թագաւորացն՝ յիսմայելացւոց և Յունականէն ամս և»<sup>74</sup>:

Մաթևոսյանը, ինչպես նշեցինք, չի նկատում Սամվել Անեցու բնագրի շփոթը: Պատմիչը գրում է. «Զկնի մահուանն Սմբատայ՝ առնու զտէրութիւն Աշոտ որդի նորա: ...Ոստիկան ոմն՝ որ Ալիարմնի կոչէր եկեալ յամիրապետէն՝ յետ սպարապետութեան իշխանաց իշխան զնա Հայոց կացուցանէր դամս և.»:

Նախ աղբյուրը Աշոտին համարում է Սմբատի որդի, ուստի նա Աշոտ I-ը չէ, այլ Աշոտ II-ը: Այնուհետև ցույց է տալիս, որ ոստիկան Ալիարմնին (Ալի իրն Յահյա ալ Արմանին) նրան Հայոց իշխանաց իշխան նշանակեց: Ուստի խոսքը վերաբերում է Աշոտ I-ին և 862 թ. դեպքերին: Եվ 862 թ. իշխանաց իշխան դարձածը 30 տարի այդ պաշտոնը վարելով, մահանում է (որպես Աշոտ II) 929 թ.:

Կարծես Վարդան Արևելցին շատ մոտ էր կանգնած «գեպքերին». Մաթևոսյանը նրանից հետո գրած մի հեղինակ էլ է ճարում իր վարկածը «հաստատող»: «Վերջապես, — գրում է նա, — ունենք XIII դ. հանրահայտ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությունը, իսկ Օրբելյանը լայնորեն օգտվել է իր նախորդների երկերից», այդ թվում և Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից: Ստ. Օրբելյանը գրում է. «Աշոտ կայր ի փախուստ առ կայսրն Յունաց: Որում թագ կապեալ Ռոմանոսի կայսեր՝ յուղարկէ ի Հայս» (էջ 175): Բայց ումից պիտի փախչեր, արաբներից, որոնք իրեն մեծ սխալով էին արել՝ նշանակելով Հայոց «իշխանաց իշխան», իսկ ապա և թագ ուղարկելով: Կոստանդնուպոլիս «փախածը», ավելի ճիշտ այցելածը Աշոտ I-ը չէր, այլ Աշոտ II-ը, և նրան բյուզանդական թագ շնորհելու մասին ևս ոչ մի աղբյուր չի հիշատակում: Այդ մասին «Թագաւորական բողոքի» առիթով խոսք արդեն եղել է: Սա էլ Օրբելյանի «արժեքավոր» հիշատակությունը:

Այսպես, բոլորը, այդ թվում և Օրբելյանը, օգտվում են իրենց անհայտ նախորդներից, իսկ Մաթևոսյանը ոչ մեկի անունը չի տալիս, իսկ մեկը, որին նա հիշում է հանվանե՝ Հովհաննես Դրասխանակերտցին, նա էլ թագի մասին բան չի ասում: Զավեշտական ուրիշ տեղում է: Ռոմանոս կայսրը, ըստ Անանունի, կայսր դառնալուց 7 տարի առաջ թագ էր տվել Սմբատ Բագրատունուն, այժմ նույն Ռոմանոսը, ըստ Օրբելյանի, թագ է տալիս Աշոտ II-ին: Թերևս Մաթևոսյանը հավատացած է, որ ծովակալ Ռոմանոսը նախքան կայսր դառնալը և՛ Սմբատին, և՛ Աշոտին թագ է ուղարկել: Եվ դա աղբյուրադիտական հետադոտություն է համարվում: Ստացվում է, որ

<sup>74</sup> Մամուէլի քահանայի Անեցույ. Հաւաքմունք ի գրոց սլատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 94:

<sup>75</sup> Մաթևոսյանը նույն բառերով բնութագրում էր Վարդան Արևելցուն. «Վարդանը շատ է օգտվել իր նախորդներից», բայց, ինչպես տեսանք, ոչ մեկը Բագրատունիներին «չնորհված» թագի մասին բան չէր ասում:

հեղինակը չի նկատում տարբերությունը, քանի որ ոչ մի բացատրություն չի տալիս այս խառնաշփոթությանը:

Իր կարծիքը գրավոր աղբյուրներով «Հաստատելուց» հետո, Մաթևոսյանն արգեն անցնում է «նյութական» փաստերով այն հաստատելուն, երեք հայ թագավորների թագը համեմատության մեջ գնում բյուզանդական երեք կայսրերի թագերի հետ և դրանց միջև նմանություններ նկատում: Բայց նա չունի ո՛չ Աշոտ I-ի, ո՛չ Աշոտ II-ի թագերի պատկերը, ո՛րտեղից գիտե, թե նրանց թագը ինչպիսին էր: Նա ցույց է տալիս միայն մեկի պատկերը, որը մի տեղ համարում է Գագիկ Արծրունու թագ (էջ 172), մի այլ տեղում՝ Սմբատ I-ի (էջ 176): Ընդունենք, որ գործ ունենք Սմբատ I-ի թագի հետ: Սակայն ի՞ր Մաթևոսյանի, հողվածում բերված երեք կայսրերի՝ Լևոն VI-ի (886–912), Ալեքսիոս I Կոմնենոսի (1081–1118) և Կոստանդին IX Մոնոմախի (1040–1055) թագերն իրար նման չեն: Ջարմանալի է, Աշոտ I-ին թագ «չնորհել է», Վասիլ I-ը, Սմբատին և Աշոտ II-ին, Մաթևոսյանի ասելով՝ Կոստանդին Միրանաձինը, ապա փոխանակ նրանց թագերը համեմատության մեջ գներ, բերում է նրանցից 150–200 տարի հետո թագավորած կայսրերինը: Հարց է ծագում, ինչու՞: Վասիլ I-ի և Կոստանդին Միրանաձինի թագերի պատկերները այնքան շատ են պահպանվել<sup>76</sup>, որ Մաթևոսյանի նման մոտեցումը չի կարող կասկած չհարուցել: Երեք հայ թագավորների ժամանակակիցն էր Լևոն VI-ը, նա էլ մի տեղ Սմբատին է թագ տալիս, մի այլ տեղում Սմբատին թագ տվողը Կոստանդին Միրանաձինն է:

Ահա այդ երեք, իրար նմանություն չունեցող կայսրերի թագերին, ըստ Մաթևոսյանի, նման է Վրաստանի Աթենի բնակավայրի Աբ. Միոն եկեղեցու որմնանկարում պատկերված Սմբատ I-ի թագը: Բայց եթե հայոց արքաները, Մաթևոսյանի ասելով, «հանդիսավոր և պաշտոնական արարողությունների ժամանակ» արաբական չալման էին հագնում, ինչու՞ Սմբատ I-ը Աթենիի դեպքում «բյուզանդական» թագն է հագել: Աթենիի որմնանկարը, ուր պատկերված են Սմբատ I-ը, նրա դուստրը և թագաժառանգը, արքայազն թագավոր Կոստանդինը և նրա թագաժառանգը, իրոք հանդիսավոր խմբանկար չէ՞: Հողվածագիրը փոխանակ Սմբատի պատկերը զետեղեր կայսրերի պատկերների կողքին, որպեսզի «նմանությունը» աչքի զարներ, այն զետեղել է հողվածի մի էջում, կայսրերինը՝ այլ: Թերևս որպեսզի «աննմանությունը» չնկատվի<sup>77</sup>: Ինչ ընդհանուր բան կա, օրինակ Սմբատի թագի, Լևոն VI-ի, Կոստանդին Մոնոմախի և Ալեքսիոս Կոմնենոսի թագերի միջև:

Անցնենք Սմբատին պատկերող որմնանկարի ստեղծման թվականին: Ըստ հողվածագրի, Աթենիի «եկեղեցու բեմի արսիդից վերև գրված է 906 թ.», որի հիման վրա հրատարակիչ Շ. Ամիրանաշվիլին որմնանկարը թվագրում է 904-906 թթ. (էջ 176): Ստացվում է, որ Վրաստանում 906 թ. գործում էր Հռոմի պապ Գրիգոր III-ի 1582 թ. հաստատած Գրիգորյան տոմարը: Բայց չէ՞ որ, ըստ Մաթևոսյանի, Կոստանդին Միրանաձինը Սմբատին

76 Թեկուզև մեր «Կոստանդին Միրանաձին» գրքում բերված Վասիլ I-ի, Լևոն VI-ի, Կոստանդին Միրանաձինի դրամների վրայի պատկերները կամ Կոստանդին Միրանաձինի փղոսկրյա տախտակի վրայի պատկերը՝ նույն դրքում:

տին թագ էր «ուղարկել», լավագույն դեպքում, 913 թ. ոչ առաջ (կայսրը այդ թվականին սկսեց թագավորել՝ 7 տարեկան Հասակում), Հայոց արքայի նահատակության տարին (կամ Հետմահու...), ապա ինչպե՛ս 904-906 թ. որմնանկարում նա կրում է բյուզանդական թագ: Ասենք, որ 904-906 թթ. Կոստանդին Ծիրանածինը կամ դեռ չէր ծնվել, կամ մեկ տարեկան էր:

Մնում է Համեմատել իրոք Սմբատին ժամանակակից Լևոն VI-ի (886-912) թագը Աթենիի որմնանկարում պատկերված Սմբատ I-ի թագի հետ: Նախ ՊՔՀ Հիշյալ Համարում լույս տեսած նկարի չափն ու որակը Հնարավորություն չի տալիս Համեմատություն կատարել: Բայց երբ ձեռքի տակ ես ունենում եմ. Ամիրանշվիլու հրատարակությունը, ուր Սմբատի նկարը առնվազն 10 անգամ խոշոր է, քան Մաթևոսյանի բերածը, ապա պիտի անսահման երևակայություն ունենալ, որպեսզի այդ երկուսը նույնանման տեսնել:

Արդ, եթե կայսրերի կողմից, Մաթևոսյանի Համոզմամբ, «թագավոր» *βασιλευς* - րասիլևս ճանաչված որևէ երկրի վեհապետին ուղարկած թագը անպայման իրենց թագի նմանակը պիտի լիներ, ապա ինչու՞ Կիլիկիայի Լևոն II-ի թագը, որ նա իրոք կայսրից էր ստացել, ոչ մի նմանություն չունի Հոդվածագրի շարած թագերի հետ:

Մաթևոսյանի Հոդվածի վերնագրից, ուր նշված է բյուզանդական թագը (ե ոչ թաղերը), պարզվում է, որ Հոդվածագիրը հավատացած է, թե բյուզանդական կայսրերը (104 Հոդի) սկսած Կոստանդին I Մեծից մինչև Կոստանդին XI Պալեոլոգոս-Դրաղացեսը 1000 տարուց ավելի թագի մեկ կադստար են ունեցել և այդ կադստարով ոչ միայն իրենց, այլև օտարներին «ուղարկած» թագ էին շինում: Եթե ապագայում Մաթևոսյանն անգրագուսնա կայսրերի՝ օտարներին ուղարկած թագին, ապա խորհուրդ կտալինք մատնացուցց անել ոչ թե վերջինիս կայսեր թագի հետ ունեցած նմանությունը, այլ ընդհակառակը՝ «աննմանությունը», քանզի բյուզանդական կայսրը այնքան հիմար և ինքնասիրությունից զուրկ չէր, որ իրեն դասեր օտար տիրակալների շարքին, որոնց, ըստ Մաթևոսյանի, մեծահոգաբար թագ էր «չնորհում»: Եթե մենք շեշտը գնում ենք թագի «աննմանություն» վրա և գտնում ենք, որ Սմբատ I-ի թագը Աթենիի որմնանկարում նման չէ Մաթևոսյանի շարած բյուզանդական կայսրերի թագերին, Հանկարծ նա չհայտարարի, թե ահա Բարթիկյանն ընդունում է Սմբատ I-ի կայսրի կողմից թագը ստանալու իրողությունը: Այդ թագը հայկական թագ էր, և ոչ բյուզանդական:

Արդ, քանի Հիչեցինք Կիլիկիայի թագավորին և նրա թագը, նշենք Մաթևոսյանի թվագրական մի մարգարիտ ևս: Նա գրում է. «Օտար և հայկական թագերի տարբերությունը հստակ երևում է նաև Կիլիկիայի Լևոն III թագավորի օրինակով մի դեպքում այն Ֆրիդրիխ Բարբարոսայից ստացած գերմանական թագն է, մյուս դեպքում՝ հայկական» (էջ 176): Բայց 1269-1289 թթ. թագավորած Լևոն III-ը ինչպե՞ս կարող էր Ֆրիդրիխու Բարբարոսայից թագ ստանալ, երբ վերջինս լող տալ չիմանալով խեղդվել էր Կիլիկիայի Կալիկադոնոս գետում 1190 թ.: Ընդունենք, որ Լևոն III-ը տպագրական վրիպակ է, պիտի լինի Լևոն II (Լևոն I չի կարող լինել, նա իշխան էր (1129-1137 թթ.): Բայց Լևոն II-ը գերմանական թագ ստա-



ցավ 1198 թ., այն Հռոմի պապի կողմից բերողը արքեպիսկոպոս Կոնրադն էր<sup>77</sup>, հետևաբար լող տալ չիմացող և Կալիկադոնոս գետում 1190 թ. խեղդվող Ֆրիդերիկոս Բարբարոսան Լևոն II-ին էլ թագ շնորհել չէր կարող: Սա էլ ի միջի ալլոց: Չմոռանանք հիշել, որ «Լևոն III-ը», ըստ Մաթևոսյանի մի փոքր առաջ նշած կարծիքի, ուներ գերմանական թագ և հայկական թագ: Ի՞նչ է, բյուզանդական թագ չունե՞ր:

Ռ. Մաթևոսյանի եզրակացությունը, որից պարզվում է, թե ինչքան թյուր է նա պատկերացնում խնդիրը. «Այսպիսով, նյուեթական մշակույթի նմուշները (ո՞ր — Հ. Բ.), Սիոն եկեղեցու որմնանկարը հաստատում են գրավոր աղբյուրների վկայությունները Վասիլ I կայսեր Աշոտ I-ին, Լևոն VI կայսեր՝ Սմբատ I-ին (բայց վերևում ցույց էր տվել, որ Սմբատ I-ին թագ էր տվել Կոստանդին Ծիրանածինը, «ուղղելով» Ռոմանոս Լեկապենոսի կողմից այն շնորհելու մասին Անանունի և իր սխալը — Հ. Բ.)<sup>78</sup> և Կոստանդին Ծիրանածին կայսեր՝ Աշոտ II-ին թագ շնորհելու (բայց վերևում նա ցույց էր տվել, թե Կոստանդին Ծիրանածինը Սմբատ I-ին էր թագ տվել և ոչ Աշոտ II-ին — Հ. Բ.) և դրանով իսկ հայ պետությունը թագավորություն ճանաչելու մասին» (էջ 177):

Այստեղ պիտի մատնացուցիք անել Մաթևոսյանի՝ ընթերցողի անգիտությունը չարաշահելու և նրան ապակողմնորոշելու մի փաստ էլ: Նա գրում է. «Բյուզանդական կայսրությունը թագավոր էր ճանաչում և թագ էր ուզարկում ոչ միայն Հայաստանի, այլև այլ երկրների գահակալներին: Կան այդ իրողությունը հաստատող փաստեր. բերենք երկու օրինակ. XI դ. Բյուզանդիան երկու անգամ թագ էր ուղարկել Հունգարիայի գահակալներին, Կոստանդին Մոնոմախոսը՝ Անդրեյ I-ին թագադրության առթիվ և Միխայիլ Դուկասը՝ Գեգե I-ին (նշում ենք մեզ հայտնի օրինակները» (էջ 178): Ուզում է ասել, թե այլ օրինակներ էլ կան:

Հարցն այն է, որ ոչ Կոստանդին Մոնոմախոս, ո՛չ էլ Միքայել Դուկասը հունգար թագավորներ էնդրե I-ին (Մաթևոսյանը գրում է Անդրեյ, կարծես նա ռուս լինի) և Գեգա I-ին թագ չեն ուղարկել, այլ նրանց կանանց գիադեմա են ուղարկել: Դա շատ լավ գիտե Մաթևոսյանը և իր հղումները ստուգելիս իրականությունը մեջտեղ է գալիս: Մարդ ինչպիսի քայլերի կարող է դիմել իր կանխակալ կարծիքն անցկացնելու համար:

Կոստանդին IX Մոնոմախի ուղարկած դիադեման Վ. Լիխաչովան սխալմամբ անվանում է КОРОНА և ըստ վերջինիս, այն իր ձևով շատ նման էր Ջոն և Իրենե կայսրուհիների թագին<sup>79</sup>, ասել է՝ թե այն ուղարկված է եղել ոչ թե էնդրեին (դա նույնիսկ վիրավորական կլիներ, կանացի դիադեման թագավորին), այլ նրա կնոջը՝ Անաստասիային, որ Կոստանդին Մոնոմախին ազգական էր:

77 Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 156.

78 Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Սմբատը «ոչ զատ էր զինքն ի սիրընթաց մտերմութենէ կայսերն Հռոմոց Լևոնի», բայց և ոչինչ չի ասում նրան թագ շնորհելու մասին (էջ 158):

79 В. Лихачев а. Искусство Византии IV-XV вв. М., 1986, с. 194 (Մաթևոսյանի նշած էջը սխալ է):

Անցնենք Միքայել VII Դուկասի ուղարկած «Թագին», հենվելով Մաթևոսյանի աղբյուրին. «Կայսրը Կոստանդին Մոնոմախից 30 տարի անց մի այլ դիադեմա ուղարկեց Հունգարիայի թագավոր Գեղա I-ի կնոջը. բյուզանդական իշխանուհի Սինադենային, ապագա բյուզանդական կայսր Իսկևիրոս III Բոտանիատեսի զարմուհուն», և ոչ հունգար թագավորին<sup>80</sup>: Որ դիադեման թաղ չէ, պարզվում է Սինադենայի Գեղա I-ի կնոջ ստացածով: Նշենք Մաթևոսյանի նույն աղբյուրի տվյալները: "Во второй половине XII в. при Беле III диадему переделали<sup>81</sup> в корону с полусферическим верхом,": Ի՞նչ է ստացվում: Մաթևոսյանը կարդում է *Διαδέμα*, թարգմանում է «Թագ» (корона), կարդում է *Жена* (Անաստասիա և Սինադենա), թարգմանում է Անդրեյ և Գեղա թագավորներ: Սա դիտություն է, թե լարախաղացություն:

Վերջապես, «Թագ ստացող» մեկի մասին ևս: Այս անգամ, համաձայն Մաթևոսյանի, «բյուզանդական թագ է շնորհվել նաև Փառիսոսի իշխան Հովհաննես-Աննեբերիմին, որ մինչ այդ թագ էր ստացել պարսից թագավորից» (էջ 178): Ուրեմն, ստացվում է, որ համաշխարհային կայսրությունը իրեն հավասար պիտի համարեր Փառիսոսի իշխանությունը: Այն Բյուզանդիան, որ թագ չէր ուղարկում Կարլոս Մեծի ժառանգներին, գերմանական կայսր Ֆրիդրիխոս Բարբարոսային և նրա ժառանգներին, ինչպես և դիվանագիտական հարաբերություններ հաստատած հայկական իշխանություններին և Բագրատունյաց ու Արծրունյաց թագավորություններին, այն պիտի ուղարկեր արդեն «պարսից թագավորի» ձեռքն անցած իշխանությունն, որի թագավորությունը վերականգնվում էր այդ «պարսիկ թագավորի» րարհաճությունը: Ավելորդ չէ այստեղ նշել, որ այս շրջանում բոլոր հայ իշխանները իրենց թագավոր հռչակեցին: Ինչպես գրում է ակադեմիկոս Հ. Մանանգյանը, «որքան իշխաններ, նույնքան թագավորներ: Բազմաթիվների ժամանակաշրջանում 7 անջատ իշխաններ հետզհետե ստացել են թագավորի տիտղոս»<sup>82</sup>: Բայց սրանցից վեցին Բյուզանդիան թաղ չի «ուղարկել», Փառիսոսի իշխանը ինչո՞վ էր աչքի ընկել, որ թագ «ստացավ»: Գուցե Մաթևոսյանը դա բացատրի՞: Եթե Մաթևոսյանը իրոք հավատացած է, որ Փառիսոսի իշխանն էլ բյուզանդական թագ է ստացել, ինչու՞ հողվածի վերնագրում բավարարվել է երեք Բագրատունի արքաներին նշելով և չի ընդգրկել նաև Փառիսոսի իշխանին: Ինչու՞ նա նրա մասին այնքան լակոնիկ է: Հողվածագիրը նեղություն չի քաշում անգամ ցույց տալու այս Հովհաննես-Աննեբերիմի իշխանության ժամանակը, որպեսզի պարզվի նաև ո՞վ է «պարսիկ» թագավորը և իրեն թագ «շնորհող»

80 Культура Византии. Вторая половина VII – XII вв., М., 1989, с. 538. Բերենք մնազիրը, որպեսզի մեր ասածը կասկածի տակ չառնվի. "Тридцатью годами позже Михаил VII Дука Парасинак (1071– 1078) послал другую диадему жене венгерского короля Гезы I (1074 – 1077) – византийской принцессе Синадине, племяннице будущего императора Никифора III Вотаниата".

81 Իրենք՝ հունգարացիները (և ոչ բյուզանդական արքունիքը...):

82 Культура Византии, с. 538.

83 Հ. Մանանգյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր. Երևան, 1960, էջ 34:

երևակայական բյուզանդական կայսրը<sup>84</sup>: «Փաստը» Առանշահիկների ոչ հավաստի, աղավաղված տոհմաշղթայի կամ գրչական աղավաղման հետևանքով<sup>85</sup> ունի հետևյալ տեսքը: Այն բերում է Մովսես Կաղանկատավացին: Ըստ նրա, Հովհաննես-Սենեքերիմը Հայոց արքա Սմբատի (ո՞ր) ժամանակակից Սահակ-Սևադայի ծոռն էր, Սահակ-Սևադայի որդի Գրիգորի որդի Իշխանանուն-Սևադայի որդին: Ուրեմն դեպքերը տեղի են ունենում Սմբատից երեք սերունդ անց: Ահա, ըստ Կաղանկատավացու, այս Հովհաննես-Սենեքերիմին «ընտրեաց աչ բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն. զվազնջուց խափանեալ թագաւորութիւնն տէրն ամենակալ ի ձեռն սորա նորոգեաց, գոր թագաւորն Պարսից<sup>86</sup> շքով և մեծամեծ զարդուք դարդարեաց զնա. տայ նմա զթագ Հօր Իւրոյ և զնորին երիվարն»<sup>87</sup>:

Ատացվում է, որ Հովհաննես-Սենեքերիմի հայրը ևս թագավոր է եղել և նրա օրոք, պարզ է, «պարսիկների» կողմից այդ թագավորութունը վերացել էր «վաղնջուց», ասել է՝ վաղուց: «Պարսիկները» խլել էին Հովհաննես-Սենեքերիմի հոր Իշխանանուն-Սևադայի ոչ միայն թագը, այլև ձին: Թագը պահել հնարավոր էր և պահեցին: Երիվարը ինչու պահեցին: Եվ այդ «վաղնջուց» տարած ձին այժմ, պարզ է քանի տարեկան, ատամները թափած, երշիկի համար էլ ոչ պիտանի, տարած թագի հետ վերադարձնում են Հովհաննես-Սենեքերիմին: Ահա այսպես: Թագի և երիվարի վերադարձնելու տարին «և որ Յունացն էր մագիստրոս Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան և ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ և ի գովեստ աստուածայաջող առն այնորիկ, որ և ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զօծումն թագաւորական ի փառս Քրիստոսի»<sup>88</sup>:

Այս նախադասության ընդգծված մասից կարելի է եզրակացնել, թե «Բյուզանդիան թագ է շնորհել նաև Փառխոստի իշխան Հովհաննես-Սենեքերիմին»: Հավանաբար Փառխոստում հմուտ դերձակ և ճոն չկար, որ թագ ու պատմուճան կարեր նոր թագավորի համար, Դաւիթ մագիստրոսը, Բյուզանդական կայսրութունում եղած ժամանակ, որևէ արհեստանոցում թագ ու պատմուճան է պատվիրել, գնել և ուղարկել Փառխոստի նորընծա թագավորին:

Բյուզանդական կայսրության արհեստանոցների արտադրանքը դնում էին ոչ միայն տեղացիները, այլև հատուկ այստեղ ժամանող արտասահմանցիք, այդ թվում և վեհապետների գործակալները: Սմբատ I թագավորի բյուզանդական կայսր Լևոն VI-ի հետ սիրալիկ կապեր հաստատելու առթիվ Հայոց արքայի դեմ արար ոստիկան Ափշինի վրդովմունքը մեղմել ցանկացող Հայոց արքան, Ափշինին հասցեագրված իր նամակում ցույց էր տալիս, որ հայ-բյուզանդական կապերը օգտակար են նաև խալիֆայության համար: «... զի եթէ սէր ընդ կայսեր եղի,— գրում է նա,— և այն վասն

84 Բ. Ուլուբաբյանը դեպքերը թվագրում է X դ. կեսին: Տե՛ս Խաչենի իշխանութունը X-XVI գդ. Երևան, 1975, էջ 102:

85 Նույն տեղում, էջ 101:

86 «Պարսից» թագավորը, ըստ Մաթևոսյանի, Գանձակի ամիրան է (Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը, էջ 171): «Սուլտանն պարսից» էր և սելջուկ Ալի Լարսյանը (Մատթեոս Ունհայեցի, էջ 180):

87 Մովսես Կաղանկատավացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 341:

88 Նույն տեղում:

ձեր օգտի, դի թերևս որ պիտոյ է ամիրապետին մեծի (խալիֆային – Հ. Բ.) և զքո ևս դիւրեաւ զպէտս ի Յունականաց անտի գտանել մարթացից. և ի նպաստ օժտութեան ձեզ ընծայել զերևելի հանդերձից և զարդուց և զսպասուց վայելս»<sup>89</sup>: Եթե արար ոստիկանը, խալիֆան, որ Բյուզանդիայի դիվանագիտական հարաբերություններ հաստատած 50-ից ավելի պետությունների վեհապետների շարքում գրավում էր առաջին տեղը, դեմ չէր Բյուզանդիայի շուկաներից այդ ամենը հայթայթել, Դավիթ մագիստրոսը դրանից ինչու՞ չպիտի օգտվեր Փառիսոսի թագավորի սիրունը:

Բավականին երկարած մեր խոսքը ավարտենք Մաթևոսյանի եզրափակող նախադասությամբ, որը եթե բնորոշենք որպես «որոտ պարզ երկնքից» սխալված չենք լինի: Իր հոգվածի առաջին իսկ՝ 169-րդ էջում նա Բարթիկյանին մեղադրում էր այն բանում, որ «լինելով բյուզանդագետ, անվերապահորեն ընդունում է բյուզանդագիտություն մեջ ամրացած այն տեսությունը, ըստ որի կայսրությունը թագավոր (ΒΑΣΙΛΕΥΣ) ճանաչում էր միայն իր կայսրին»: Հոգվածի վերջում մեր ընդդիմախոսը ուղղակի հայտարարում է. «ՃԻՇՏ է, ՀԱՅՈՅ ԹԱԳԱՎՈՐԸ ՁԻ ԾԱՆԱԶՎԵԼ «ΒΑΣΙΛΕΥΣ» (էջ 177): Սա երկրորդ որոտն է: Առաջինը հիշել էինք վերևում: Մենք դրել էինք, որ բյուզանդական արքունիքի համար հայոց թագավորները «իշխանաց իշխան» էին: Երկար-բարակ մեր այդ վարկածի դեմ վիճելով, Մաթևոսյանը դրել էր նույն բանը. «ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ (ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ԸՍՏ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԱՅՄԱՆ»<sup>90</sup>: Ի՞նչ է, Մաթևոսյանն արդեն դարձել է «բյուզանդագետ»»: Եթե դա պիտի լիներ եզրակացությունը, էլ իմաստ ունե՞ր այդ հոգվածը գրել: Մաթևոսյանը անճարակ կերպով փորձում է իր իսկ ստեղծած դժվարին վիճակից դուրս գալ ավելացնելով, թե հայոց թագավորին *hasileus* - բասիլևս չճանաչելով, «չէր ժխտվում նրա թագավորական պատեկը» (!): Եթե Բյուզանդիան, ինչպես արդեն համոզվել է Մաթևոսյանը, հայոց թագավորին չի ճանաչել *ΒΑΣΙΛΕΥΣ* - բասիլևս, ապա իր՝ *ΒΑΣΙΛΕΥՏ*-ի (բասիլևսի՝ բյուզանդական կայսեր) թագի նմանակը նրան կչնորհե՞ր: Էլ ինչու՞ է Դոն Կիխոտի նման հողմաղացների դեմ նիզակ ճոճում:

Հարց է ծագում: Ինչու՞ այդպես ստացվեց: Բացատրել դժվար չէ: Որովհետև հոգվածագիրը որևէ դիտական հարցում եզրակացության է հանգում ոչ թե ելնելով աղբյուրների տվյալներից, այլ ունենալով կանխակալ կարծիք, ջանքեր է թափում այն հաստատել աղբյուրների հաղորդումներով: Ինչի որ դա չի հաջողվում, դիմում է աղբյուրների տվյալները ձգելուն, ձեկելուն, հաճախ միտումնավոր աղավաղելուն, վերջապես լռության մատնելուն, հույսը դնելով ընթերցողի հավանական անգիտության և միամիտ վստահության վրա: Մի խոսքով, ստացվել է հին հունական առասպելաբանության Պրոկրուստյան մահճի պամությունը: Պրոկրուստես անունով ավաղակր ունեք երկու մահճակալ, մեկը երկար, մյուսը՝ կարճ: Թաքնվելով Աթենքից Մեգարա տանող ճանապարհի մի խուլ անկյունում, բռնած մարդուն պառկեցնում էր մահճին և ջանում, որ նա իր երկարությունը

89 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս ի ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 158-159:

90 Ի. Մ ա թ է ո ս յ ա ն. Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածք..., էջ 137-138: Իրոք, որ ձախ ձեռքը չի իմանում ի՞նչ է անում աչք:

մահճին հավասարվի: Բարձրահասակ մարդուն պառկեցնում էր կարճ մահճակալին և մահճակալից դուրս ընկած մարմնի մասերը՝ ոտքերը կտրում: Կարճահասակ մարդուն պառկեցնում էր երկար մահճակալի վրա և նրան այնքան էր ձգում, որ ի վերջո նա հոգին փչում էր: Հենց այդ կերպ է վարվում Մաթևոսյանը պատմական փաստերի հետ: էժանագին դեմագոգիային զոհ գնացող ընթերցողը կարող է ասել. ի՞նչ վատ բան է անում Մաթևոսյանը, ինչ ճանապարհով ուզում է լինի, նա ճոխացնում է մեր պատմությունը, ցույց տալիս, օրինակի համար, որ իր վեհաժամք Փառիսոսի իշխանությունը նույն ինքը Բյուզանդական կայսրությունն էր, նրա թագավորը՝ նույն ինքը Բյուզանդական կայսրը, իսկ նրա մայրաքաղաքը ավելի ճիշտ մայրավանը, եթե կարելի է ասել (Փառիսոսը ավան էր, և ոչ քաղաք)<sup>91</sup>, հենց կոստանդնուպոլիսը:

Մեր պատմությունը այնքան ճոխ է ու վեհ, որ յուր կզնա առանց կարծեցյալ Բյուզանդական թագերի: Հակասություններով և թյուրիմացություններով լի Մաթևոսյանի խառնաշփոթ աշխատությունը, որի հեղինակը համոզված է, թե հարցից ընդհանրապես հասկացող չկա և ուզածը դուրսը կարող է «անցկացնել», սոսկ վարկաբեկում է դարավոր ավանդույթներ ունեցող հայ պատմագրությունն ու պատմագրությունը: Միամիտներս կարծում էինք, որ գավառական հայագիտության դարն անցյալ է: Պարզվում է, սխալվում ենք...

## О ТАК НАЗЫВАЕМОЙ "ВИЗАНТИЙСКОЙ" КОРОНЕ ПЕРВЫХ ТРЕХ БАГРАТИДСКИХ ЦАРЕЙ

РАЧ БАРТИКЯН

### Р е з ю м е

Автор разбирает статью Р. Матевосяна под заглавием "Византийская корона Багратидских царей (Ашот I, Смбат I, Ашот II)" ("Историко-филологический журнал", 2001, №1). По содержанию она имеет отношение к геральдике, которой Матевосян посвятил отдельную брошюру. И геральдика, и царские инсигнии требуют от исследователя специальных познаний, которых у Матевосяна, к сожалению, нет. И именно этим объясняются многочисленные недоразумения и ошибки в его работе. Все декоративные рельефы на стенах армянских средневековых церквей Матевосян объявляет гербами армянских феодальных фамилий. Он ошибочно принимает за гербы тех же армянских фамилий также символы четырех евангелистов (человек, вол, лев, орел), а капители в виде орла на четырех пилонах храма VI в. Звартноц объявляет гербом строителя храма — католикоса Нерсеса III. Матевосян, упорно игнорируя широко известную доктрину византийского двора, согласно которой в мире существует один *василевс* — тот, который восседает в Константинополе, считает, что империя признала *василевсами* первых трех Багратидских царей и преподнесла им *императорскую корону*. При этом, вопреки свидетельствам армянских и византийских

источников, он безосновательно утверждает, что Византия никогда не называла армянских Багратидов архонт-архонтами (по-армянски — ишханац-ишхан), чтобы в заключение признать правомерность наших суждений (с которыми он долго дискутировал) и написать: "Правда, армянский царь не был признан *василевсом*". А также: "Багратидский царь (*ишханац-ишхан*, по представлению византийского двора)".

#### ABOUT THE SOCALLED "BYZANTINE" CROWN OF THE FIRST THREE BAGRATID KINGS

HRACH BARTIKYAN

#### S u m m a r y

The author considers the article of R. Matevosyan titled "The Byzantine crown of the Bagratid kings (Ashot I, Smbat I, Ashot II)" ("Patma-Banasirakan Handes", N1, 2001). Its contents concerns heraldry, to which Matevosyan dedicated a separate brochure. Any researcher shall have special knowledge in order to be engaged in both heraldry and king insignia. Unfortunately, Matevosyan has not such attainments and this is the reason of numerous misunderstandings and mistakes in his work. He declares that all ornamental relieves on the walls of the Armenian medieval churches are emblems of the Armenian feudal families. He believes erroneously that the symbols of four Evangelists (man, ox, lion, eagle) are the blazonry of the same Armenian families as well. He also asserts that the eagle-shaped capitals on the four pylons of the church Zvartnots, built in the 7th century, are the emblem of the church's builder Catholicos Nerses III. Matevosyan ignores stubbornly the well-known doctrine of the Byzantine court according to which *basileus* is sole - the one, who seats in Constantinople. He believes that the empire recognized as *basileuses* the first three Bagratid kings and gave them the *imperial crown*. At that, despite the Armenian and Byzantine sources, he alleges that Byzantium never called the Armenian Bagratids archont of archonts (*ishkhanats-ishkhan* in Armenian). But finally, contradicting himself, he accepts the truth of our opinion (which he has long debated about): "Indeed, the Armenian king was never admitted as *basileus*." And then: "The Bagratid kings (*ishkhanats-ishkhan*), according to the idea of the Byzantine court".